

2903

744-47

II 73

ԽՆԸՆԸՐԸԾԻՆ

ԱԳՋԿԼՆԵՐ

ԵՂԻՍԵԻԵԹԻՆ ԵՐՋԱՆԵԻԿ

ՄԸՀՐ:



Ի Երկրորդ Գրքի 10: Երկրորդ Գրքի 10: Երկրորդ Գրքի 10:



Ի ՉԻՖԻԹԵԻՆ

Ի Տպարանի Կուլիկևնոս Կոնֆիթի:

1841:

12004

75-9885

8 + 241



Խ Ե. Շ Ն Ե. Բ Ե. Ծ Ի Կ :

Ե. Գ. Զ. Ի Կ Բ :

Ե. Գ. Ի Ս Ե. Բ. Ե. Ծ Ի Կ Ն Ե. Բ. Զ. Ե. Կ Ի Կ

Ս Ե. Զ. Բ :

Իրաւցրնէ շատ զուարճալի մէկ գործ մըն է
Լստուածային շնորհաց զօրութիւնները փրն-
տրուել ու անոնց վրայօք քաջ տեղեկութիւն ու-
նենալ, ինչպէս որ անոնք Լստուծոյ ճշմարիտ
զուկրներուն հանդամանացը ու վարքերուն մէջը
յայտնի կը տեսնուիլին : Սանաւանդ առաւել զու-
արճացուցիչ մէկ բան մըն է ասիկա աղքատ մար-
դոց մէջը տեսնելը, թէ որչափ անգամ ողորմու-
թեան լոյսը անոնց սրտին վրայ կը ճառագայթէ,
ու Վրիստոսի պատկերը անոնց վրայ կը բլբլեւ
կը վկայէ որ Լստուծոյ Հոգւոյն զօրութիւնը ը-
րած է :

Լս տեսակ մարդոց մէջը Վրիստոնէական
բնութեան անկեղծութիւնը ու պարզութիւնը
յայտնի կերեցունեն ան արգելքը՝ որն որ շատ
անգամ մեծ գայթակղութիւն կը լայ բարձր աս-
տիճաններու մէջ եղող մարդոցը :

Շատ դժուարութիւններ կայ՝ որ հարստու-
թիւն, փառաւորութիւն, աշխարհային մեծու-
թիւն սիրող, ու նաև մեծատուն ազգականներ
ունեցող մէկը Լստուածապաշտութեան ուսմա-
նը ճամբուն մէջ մտնայ :

Իրաւցընէ մեծ երջանկութիւն կըթագաւորէ
 Հոն , (ինչպէս որ մէկ քանի ասանկ երջանիկ օրի-
 նակներ ալես տեսած եմ ,) ուրտեղ շնորհքը իր
 պատերազմովը զարմանալի կերպով յաղթութիւն
 կընէ բնական հպարտութեան , անձնասիրու-
 թեան , հեշտասիրութեան , հանգստութեան , ու
 աշխարհային խորհուրդներուն դէմ , երբոր ազ-
 նուականներ ու երեւելի մարդիկներ ճշմարիտ հոգ-
 ւոյ աղքատութեամբ , անձնուրացութեամբ , ու
 խոնարհութեամբ և ջերմեռանդ Մատուածապաշ-
 տութեամբ զարդարված կերևան :

Բայց ընդհանրապէս թէ որ Մատուածապաշ-
 տութիւնը իր ամենամաքուր բնութեամբը տես-
 նել ուզենք , պարտինք աս աշխարհքիս մէջի եղող
 աղքատ մարդոցը մէջ նայիլ՝ որոնք հաւատքով
 շատ հարուստ են : Արդեօք որչափ անգամ
 աղքատ մարդուն խրճիթը Մատուծոյ պալատը
 կըլայ :

Շատ մարդիկ կրնան յայտնի զուրցել թէ ի-
 բենց ամենայարգի հաւատքին ու ակնկալութեա-
 նը վարդապետութիւնները հոն սորված են , ու
 Մատուծոյ բարութեան և իմաստութեան ու զօ-
 րութեանը ապացոյցները հոն տեսած են :

Աս պատմութիւնը որ հիմայ իմ սիրելի կար-
 դացողներս տեղեկացրնելու համար պիտի զուր-
 ցրվի , մէկ ճշմարիտ վարքէ մը ու պատահած բանէ
 մը առնրված է :

Առաջին անգամ որ ես ան խաշնարածին աղ-
 ջրկանը հետ բարեկամացայ , իրմէն մէկ նամակ
 մը ընդունեցի , որուն գաղափարը հիմայ առջևս
 առած՝ անոր մէկ մասը կօրինակեմ :

Արժանապատիւ Տէր իմ ,

Թողութիւն կըշնորհէք իմ ձեզի գրելու հա-

մարձակութեանս որ մինչև հիմայ հետերնիդ տեսութիւն ըրած չեմ, սակայն մէկ անգամ մը ձեր քարոզութիւնը լսած եմ: Արհաւատամ որ դուք մէկ հաւատարիմ քարոզիչ մըն էք, ու կը յորդորէք մեղաւորները ան բարկութենէն փախչելու, որ ամէն մեղքի մէջ ապրողներուն ու անզեղէ մեռնողներուն դէմ պիտի յայտնուի:

«Աս շատ ուրախացայ ան ձեր յօժարութեանը ու սիրոյն նշաններուն վրայօք լսելովս՝ որ ան ողորմելի զինուորին ցըցուցեր էիք: Իրացընէ Վրիստոսի սէրը ձեզ ան մարդուն խրկեց, աս սէրը առատապէս միշտ ձեր հետը ըլլայ հաւատքով: Ըն ձեզ միշտ առաջնորդէ որ մոլորած մարդոցը հոգիներուն ետեւէն երթաք՝ ու փնտրուէք, ու ձեր անձը բորբոքված սիրով՝ իր փառացը համար դնէք:

Տէր իմ, ձեր Լստուծոյ ըրած աղօթքներնուդ մէջը ջերմեռանդ եղիք, որ մեղաւորները իրենց մեղքերը իմանան ու Լստուծոյ դառնան: Լստուած ինքը խոստացաւ՝ հաւատքով իր որդւոյն անոնովը խնդրոված աղօթքին պատասխանը տալու:

«Խնդրեցէք ու ձեզի պիտի տրվի»: Վրիստոսի վրայ հաւատք ունենալով՝ յուսով կուրախանանք, ու ակնունիներ ան ժամանակը մօտենալուն՝ երբոր բոլոր մարդիկ Տէրը պիտի ճանչնան, ու իրմէն վախնան, ու երբոր մէկ ազգ մը մէկ օրվան մէջը պիտի ծնի:

Ըրդեօք ինչ երջանիկ ժամանակ մը պիտի ըլլայ երբոր Վրիստոսի թագաւորութիւնը բոլոր աշխարհիս վրայ դալու ըլլայ: Ըն ժամանակը «Իր կամքը երկրի վրայ պիտի ըլլայ, ինչպէս որ երկինքի մէջը կը ըլլայ»: Սարգիկ ամէն օր իր սիրոյ

մանանայէն պիտի կերակրուին, ու բոլոր իրենց օրերուն մէջը ինքրզինքնին Տէրոջմով պիտի ուրախացընեն :

Տէր իմ, աս նամակը կիրակի օրը սկսեցի գրել, ան օրը եկեղեցի երթալէն ետ մընալով, իմ սիրելի ու մէկ հատիկ քուրս որ մէկու մը քով ծառայէր անանկ հիվընացաւ որ հոն գացի իր եղած տեղը, որ իր վըսայ պաշտպանութիւն ընեմ. սակայն հիմայ մեռաւ :

Կերևար թէ մեռնելէն առաջ ինքրզինքը բուրբովին Մատուծոյ էր յանձնած : Արյուսամ թէ հիմայ ինքը մահվան ու մեղաց աշխարհէն ելած Տէրոջը հետ մէկ տեղ յաւիտեան ապրելու գընաց :

Քուրբս շատ ուղեց որ ինքը դուք թաղէք : Այն կողմի քահանան ան գերեզմանատունը չի կրնար երթալ ուրտեղ որ ան պիտի թաղվի :

Թէ որ կուղէք աս դիրը բերողին հետ մէկ պատասխան մը գրեցէք որ գիտնամ թէ արդեօք իմ խնդիրս պիտի հաճեցընէք մի :

ձեր անարժան ծառայ Աղիսաբեթէն :

Մս նամակին շնչած պարզ ու ջերմեռանդ Մատուծապաշտութեան ձայնը իս շատ զարմացուց : Մն գիրը թէպէտ սխալ գրված ու կապված էր, բայց անիկա գրողը որ ինծի մինչև հիմա անծանօթ մէկն էր առաւել կըսիրցունէր ու նաև իր աղքատութեամբը ջերմեռանդ Մատուծապաշտ մէկը ըլլալը քաջ կըցրցունէր : Ասասանկ բնութեան տէր թղթակից մը ունենալուս համար շատ շնորհակալութիւն կիմանայի : Մն ժամանակի դրացիներուն մէջը ասանկ վարք ունեցող հոգի քիչ կըգտնուէր : Թուղթը կարդալուս պէս հարցուցի թէ աս բերողը ո՞վ է :

Պատասխան տրվին թէ բերողը դուանը դրսը-
դին կայնոր է :

Արբոր դուրս ելայ անոր հետ խօսելու , տեսայ
որ ան մէկ պատուական ծեր մարդմըն էր , որուն
երկան ու սպիտակ մազերը ու իր կնճռած դէմ-
քը արժանի ըրին զինքը սովորական յարգութենէ
էվէլ պատուելու :

Ան իր ձեռքը ու գլուխը դուանը կուրթնցուցած
արցունքները երեսներէն վար կըվազէին : Ար-
բոր անոր մօտեցայ ինքը խոնարհութիւն ընելով
մը ըսաւ :

Տէր իմ , ձեր հրամանոցը մէկ նամակ մը բե-
րի իմ աղջիկէս , բայց կըվախնամ որ մեզ շատ
համարձակ պիտի համարիք , մեզի համար աս նե-
ղութիւնը քաշելու աղաչելովնիս : Ան ատենը
պատասխան տրվի թէ “ Չէ ամենեւին , Ասաս մա-
սին շատ ուրախ պիտի ըլլամ աս մարդասիրու-
թիւնը ձեզի ու որ ե իցէ ձեր ընտանեացը մէկին
ընելու ” :

Աւզեցի որ ինքը ներս գայ ու ըսի , “ Չեր գոր-
ծը ինչ է ” :

Տէր իմ , մէկ փոքրիկ խրճիթի մը մէջ շատ
ժամանակ նստած եմ , որ ասկէ վեց մղոն հեռու
է : Այն քանի կտոր հող վարձու տրված եմ ,
ու մէկ քանի ալ կով կըպահեմ , որոնց շահովը
ու իմ օրական վաստըկածովս իմ ընտանիքս կը-
կերակրեմ :

Ինչ ընտանիք ունիս :

Անիկ մը որ հիմայ շատ ծեր ու տկար է , երկու
մանչ ու մէկ աղջիկ մը , ինչու որ միւս ողորմելի
ու սիրելի աղջիկս հիմայ աս թշուառ աշխարհքէս
զատվեցաւ :

Արշուսամ թէ ան առաւել աղէկի մը գնաց

ըսաւ քարոզիչը : Այս ալ անանկ կրկարծեմ ,
 խեղճը իր քրոջը վարքին պէս կեանք չէր վարէր ,
 սակայն կը յուսամ թէ մեռնելէն առաջ իր քրոջը
 անոր հետ խօսելուն կանոնը անոր հոգւոյն փրկու-
 թեանը պատճառ եղաւ :

Ինչ շնորհք է իմ զաւկիս պէս մէկ զաւակ մը
 ունենալը : Այս ամենեկին չէի խորհէր զգուշու-
 թեամբ իմ հոգւոյս վրայօք մինչև որ ան սիրե-
 լի աղջիկս չաղաչեց ան գալու բարկութենէն
 փախչելու համար :

Քանի տարու էք հարցուց քարոզիչը :

Աթանասունը մտայ , ու իմ կնիկս ինէ մեծ է :
 մենք օր ըստ օրէ կրծերանանքկոր ու մեր աշխա-
 տութեան ժամանակը գրե թէ անցած է :

Բայց մեր աղջիկը իր տեղը ձգեց ուրտեղ ին-
 քը ծառայութիւն կրնէր՝ աս բանին համար , որ
 տուն գայ՝ մեր վրայ , ու մեր փոքր խրճիթին վրայ
 պաշտպանութիւն ընէ . և ինքն ալ շատ սիրելի՝
 հնազանդ՝ աղջիկ մըն է :

Սիշտ ասանկ է՞ր մի :

Ոչ տէր իմ , ինքը երբոր շատ պզտիկ էր իր
 սիրտը բոլորովին աշխարհքի հագուստի՝ զուար-
 ճութեան՝ ու ընկերութեան վրայ էր : Իրաւ-
 ցընէ մենք բոլորս ալ տգէտ էինք , ու ասանկ կը-
 խորհէինք որ եթէ աս կեանքին համար զգուշու-
 թիւն ընենք , ու մէկու մը վնաս չիտանքնէ՝ ան-
 շուշտ վերջը երկինքը պիտի երթանք : Աղջիկնե-
 րուս երկուքն ալ մեզի պէս ինքնակամ ու Աստուծոյ
 ճամբաներէն ու իր շնորհացը խօսքերէն շատ մո-
 լորած էին : Անոնցմէ ամենէն մեծը դուրս ծա-
 ռայութեան գացեր էր , ու մէկ քանի տարի առաջ
 ինքը քարոզ մը լսեր էր , ու ան ժամանակէն բո-
 լորովին իր վարքը փոխեց : Սկսեց Աստուածաւ-

չունչը կարգաւ, ինքը պարկեշտ ու վարքը բարի մէկը եղաւ : Ա՛րքը, առաջին անգամին որ տուն եկաւ մեզ տեսնալու, հարիւր զուռուշնոց մէկ սակի մը բերաւ մեզի որ իր ամսականներէն է վեցուցեր էր, ու ըսաւ որ ինքը գիտեր թէ մենք օգնութեան կարօտ ենք ինչու որ օր ըստ օրէ ծերանալու վրայ էինք : Չէր ուզեր ան գեղեցիկ հանդերձներու համար վատնել իր ստակը, ինչպէս որ առաջ կրնէր՝ միայն իր ունայնութիւնը ու հպարտութիւնը՝ զուարճացունելու համար : Ինքը առաւել կրքաղձայ իր սիրելի հօրը ու մօրը աղէկութիւն ընելու, ինչու որ կրսէր թէ Վրիստոս իրեն ասանկ ողորմութիւն ցրցուցեր էր : Անք կրղարմանայինք անոր խօսքերը լսելովնիս, ու կուրախանայինք անոր հետ ընկերութիւն ընելովնիս, ինչու որ իր ընութիւնը ու շարժուածքը անանկ խոնարհ ու մարդասէր էր, ու անանկ կրբաղձար մեր հոգիներուն ու մարմիններուն աղէկութիւն ընելու, ու առջի տեսածներնուս անանկ տարբեր էր, որ մենք անհոգ ու ազէտ մարդիկներս, սկսեցինք խորհիլ թէ Վստուածպաշտութեան մէջը մէկ ճշմարիտ բան մը կայ, չէնէ մէկ մարդ մը քիչ ժամանակի մէջ այսչափ շի կրնար փոխվիլ :

Իր պզտի ողորմելի բուրը, կրխնդար ու ծագք կրնէր ան ժամանակը, ու կրսէր, իր գլուխը իր նոր ճամբընքովը դարձած է, սակայն բուրը կրսէր թէ ատանկ չէ՛ ոչ թէ իմ գլուխս, հապա կրյուսամ իմ սիրտս մեղքի սէրէն Վստուծոյ սիրուն դարձած է : Աս կուզեմ որ ձեր հիմակվան վիճակին վրտանգր ու ունայնութիւնը օր մը դուք ալ իմ տեսածիս պէս տեսնաք :

Իր խեղճ բուրը կրպատասխանէր թէ, ես քու

քարոզող լսել չեմ ուզեր, ես ուրիշ մարդիկներէն գէշ չեմ, ան ինձի բաւական է: Այն իմ քուրս, կըսէր Աղիսարէթ, թէ որ ինձի լսել չէս ուզեր, բեզի համար աղօթք ընելէն ալ իս չէս կընար արդիւէր, որ բոլոր սրտովս կընեմ:

Ահ հիմայ կը յուսամ տէր իմ, որ ան աղօթքներուն պատասխանը տրվեցան: Անչու որ երբոր իր քուրը հիւրնացաւ, Աղիսարէթ անոր տեղը՝ ու անոր վրայ պաշտպանութիւն ընելու գնաց: Անոր հոգւոյն վրայօք շատ բաներ խօսեցաւ, և ան ողորմելի աղջկանը կիրքը անանկ սկսեց շարժիլ, ու անանկ զգալի եղաւ իրեն իր առջի բրած մեղքերը, ու նաև անանկ շնորհակալ եղաւ իր քրոջը քաղցր կենցաղավարութեանը որ Աղիսարէթ անանկ կը յուսար թէ ան պիտի փրկուի: Արբոր ես իմ կենակիցիս հետ մէկ տեղ անոր հիւանդ պառկած ատենը ինքը տեսնալու գացինք, մեզի կըսէր թէ, ես շատ կը վշտանամ ու կամչնամ իմ անցեալ վիճակս միտքս բերելովս, ու ըսաւ թէ որ իմ սիրելի քրոջս Ֆրկիչը իմ ալ Ֆրկիչս պիտի ըլլայ: Անչու որ ան իր մեղանչականութիւնը տեսաւ ու իր տկարութիւնը զգաց, ու միայն կուզէր որ իր ականկալութիւնը ու փրկութեանը համար ինքըզինքը բոլորովին Վրիստոսի յանձնէ:

Ահ հիմայ տէր իմ, ան գնաց, և կը յուսամ ու անանկ կը կարծեմ, որ ան Աստուծոյ դառնալու համար իր քրոջը բրած աղօթքներուն պատասխանը տրվեցան: Ահա շէմ որ Տէրը իր ողորմելի հօրն ալ ու մօրն ալ նոյն բանը ընէ:

Աս խօսակցութիւնը ան ընդունած նամակիս վրայ մէկ շատ զուարճալի մեկնութիւն մը եղաւ, ու նաև աս երկու բանն ալ ընելու պատճառ ե-

ղաւ, մէյմը անոնց խնդիրքը կատարելու, ու մէյմալ նամակը գրողին հետ ծանօթանալու: Ասխօսք տրվի ան ծեր ու բարի մարդուն որ ան հաստատված ժամանակին մեռելին կուգամ, ու հիմակվան եղած վիճակին վրայօք քիչ մալ խօսելէն ետքը ելաւ գնաց:

Ան շատ յարգի մէկ ծեր մարդ մըն էր իր ճըմըռտկած երեսները, ճերմակ մազերը, լացող աչվրները, ծռած ուսերը, ու տկար ընթացքը ան պանդուխտին ծերութեանը նշաններն էին. ու երբոր կամաց կամաց զատվեցաւ գնաց իր ձեռքի գաւազանին օգնութեամբը որ կերևար թէ շատ տարվընէ վեր հետը կըպըտըտցընէր, շատ խորհուրդներ եկան միտքս որոնք մեծ սիրով ու զուարճութեամբ կը յիշեմ:

Հատկացեալ ժամանակին եկեղեցի հասայ, ու քիչ մը ժամանակէն ետեւ հրաւիրեցին որ գերեզմանատանը դուանը առջին ան թաղման հանդէսին սպասեմ: Ան ծեր ծնողքները, եղբայրը ու քուրը ու ուրիշ ազգականները մէկտեղ մարդուն սիրաբ թունտ հանող մէկ ժողով մըն էին եղեր: Ան աղջըկանը խոնարհ աստուածապաշտ՝ ու զուարճալի գէմբը՝ ուրկէց ան նամակը սուեր էի, իս շատ դարմացուց, որուն վրայ անկեղծաբար մեծ լրջմտութեամբ ու աստուածապաշտութեամբ խառնրված երևելի հանդարտութեան նշաններ կերևար:

Ան գիպուած մը պատահեցաւ թաղման հանդէսը կատարելու ժամանակնիս որ արժանի կըհամարիմ պատմելու:

Գիւղացի մարդուն մէկը որ մինչև աս ժամանակ անհոգ ու նաև չարագործ մէկն էր, իր զուարճութեանը համար եկեղեցի եկեր էր միայն ան եղած արարողութեանը նայելու համար: Անիկա

գերեզմանատուննալ եկաւ, ու ան թաղման միջոցին մէջը հոնտեղի զրուցված մէկ քանի խօսքերուն օժանդակութեամբը՝ իր խղճմտանքը իր ունեցած մեղքին ու վտանգին վրայօք երեւելի կերպով մը արթնցաւ: Աս բանը անանկ մը տպաւորեցաւ անոր միտքին մէջը որ ամենեւին չելաւ, հապա անիկա բոլորովին փոխեց ու նոյն փոփոխութեանը պտուղներուն մեծ ու յարատե փորձերը տեսայ: Ինքը միշտ կը համարէր որ ան թաղման պաշտօնը ու անոր մէկ քանի մասնաւոր պարբերութիւնները Աստուծոյ շնորհքովը յայտնի գործիքներ եղան զինքը ճշմարտութեան ուսմանը առաջնորդելու: Անոր համար ան օրը յիշելու արժան մէկ օր մը եղաւ: Թող յիշեն անոնք ան օրը՝ որոնք որ իղձ ունին ան աղքատներուն կարճ ու պարզ պատմութիւնները լսելու:

Հիմայ արդեօք ան Աստուծոյ նախախնամութիւնը չէ՞ր մի որ նոյն օրը ան մեղաւորը ու աստուածապաշտը երկուքը մէկ տեղ նոյն գերեզմանը բերել տրվաւ: Արդեօք որչափ մեծ է անոնց կորուստը, որոնք որ Աստուծոյ նախախնամութեան գործքերը փնտրուելու զանցառութիւն կրնեն իրենց յառիտե՛նական փրկութեանը համար:

Պաշտօնը լըմըննալէն ետե ան երկու ծեր ծընողքին ու իրենց աղջըկանը հետ քիչ մը խօսակցութիւն ըրի, անոնց դէմքը ու խօսքը շատ օգտակար էին: Աս խօսք տրվի անոնց խրճիթը երթալու, ու ան ժամանակէն անոնց հետ աղէկ մը բարեկամացայ: Աղքատներուն Աստուածը օրհնե՛նք՝ ու շարունակ աղօթք ընենք որ աղքատները հաւատքով հարուստնան, ու հարուստները հոգւով աղքատնան:

Շատ ժամանակ մէկ անուշ մտմտութիւն կու-

գայ մարդուն միտքին մէջը, իր մեռած բարեկամներուն յիշատակութիւնը միտքը բերելով : Աս բանը որչափ շատ կը լլայ Տէրոջմով ապրող ու մեռնողներուն վրայօք : Ան մարդոցը հետեղած տեսութիւններուն ու խօսակցութիւններուն յիշողութիւնը որոնք կը հաւատանք թէ հիմայ ան ընտիր աշխարհքին անապական երջանկութիւնը կը վայելեն կոր, մարդուն սիրտը բերկրալի տըրումութիւնով կը լեցընէ, ու հոգին ալ կը զօրացընէ յոյս մը տալով ան գալու օրվանը համար, երբոր Տէրոջը փառքը բոլոր իր զաւկըներուն մէկտեղ հաւքը ված ժողովքին մէջը պիտի յայտնըվի ու ալ ամենեւին չի պիտի զատվի :

Թէ որ ան մարդիկները աշխարհքի վրայ եղած ատեննին աղքատ էին կամ թէ հարուստ, ան բոլորովին մէկ ոչինչ բան մըն էր : Անոնց վիճակին ամենայարգի մասը ան է՝ որ հիմայ Աստուծոյ քով թագաւորներ ու քահանաներ եղած են : Հիմայ ան հաւատացեալ մեռածներուն թիւին մէջն էր ան խաշնարածին աղջիկը, որուն հետ ժամանակ մը շատ կը սիրէի Աստուծոյ թագաւորութեանը՝ շունորհացը ու փառացը վրայօք խօսելու : Միտք ունիմ ձեզի քիչ մընալ է վէլի ծանօթութիւն տալու ան աղջկանը վրայօք, ու կը յուսամ որ ամէն կարգացողին ալ օգտակար պիտի ըլլայ :

Իր պզտի քուրը թաղելէն մէկ քանի օր ետեան ընտանիքը տեսնալու համար անոնց խրճիթը գացի : Ղամբուն մեծ մասը առանձին ու նեղ փողոցներու մէջէ էր, որուն վրայ ընկուզի կամ ուրիշ տեսակ ծառերով գեղեցիկ կամարածե շինված էր՝ որ ճամբորդը արեգակին շառաւիղներէն կը պահպանվէր, ու զուարճութեան համար ալ շատ օգտակար նիւթեր առաջ կուգար ան ճամ-

բան երկու կողմի հողաբլուրներուն վրայ բուսած գեղեցիկ ծաղիկներէն՝ [Թուփերէն՝ ու նորատունկ ծառերէն :

Բայց ըստ մեծի մասին ան հովանաւոր առանձնութեանը՝ ու բնութեան սահմանած գեղեցկութիւնները ճամբուն մէկ զուարճութիւն մը կուտային :

Ինչ փառք կուտան անոնք՝ որոնք ստեղծված բնութեանը սքանչելիքներուն ու գեղեցկութիւններուն վրայ մանր քննութիւններ կրնեն : Արչափ փառաւոր կը ծագի իր գործքերուն մէջը՝ ան արարածներուն Մատուածը : Չնչք լսեր մի որ ամէն մէկ ծառ, կամ տերև, կամ ծաղիկ կամ [Թըռչուն, կամ որդ՝ մէկ պայծառ լեզուով մը կրկանչեն թէ՛ «Իս Մատուած ստեղծեց» :

Արբոր ես ան ծեր ու բարի խաշնարածին նրստած գիւղին մօտեցայ . ինքը մէկ պզտիկ ագարակի մը մէջ տեսայ՝ որ առջևը մէկ բանի կովէր ձգած իր խրճիթին քովի եղած բակին մէջը կը տանէր : Ինոր շատ մօտը դացի բայց ան իս չեր տեսնար ինչու որ անոր աչվրները քիչ մը աղօտ էին : Արբոր ինքը կանչեցի մէկէնիմէկ իմ ձայնս լսելովք վրդովմունքի մը մէջ մտաւ, բայց վերջը շատ ուրախութեան գէմքով մը իս բարեկեց ու ըսաւ, Տէր իմ, ես շատ ուրախ եմ ձեր գալուն, աս շաբթուսամէն օր ձեզ կը սպասէինք :

Խրճիթին դուռը բացվեցաւ ու ան աղջիկը իր ծեր ու տկար մօրը հետ դուրս ելան : Իս տեսնալնուն պէս ան գերեզմանը միտքերնին եկաւ ուր տեղ մէկ զմէկ տեսեր էինք : Մտարժանաւոր ընտանիքը ուրախութեան խնդումով խառնրված սիրոյ արցունքներով իս ընդունեցին : Չիէն վար ինչայ, ու առջևէս ինկած իս տուն տարին մէկ շատ

գեղեցիկ փոքր պարտեզի մը մէջէ, որուն մէկ մասը երկու մեծ ու լայնատարած կնձնի ծառերով հովանաւորեալ էր : Աերսը ու դուրսը գեղեցիկութիւնը ու մաքրութիւնը կրփայլէին :

Խորհեցայ թէ աս տեղը Աստուածապաշտութեան, խաղաղութեան, ու համբերութեան յարմար մէկ բնակութիւն մըն է : Արանի թէ Աստուծոյ օրհնութեամբը աս տեսութեան գալուստ պատճառաւ ան վերը յիշվածներուն ամէն մէկէն մէյմէկ նոր համար սորվէի :

Տէր իմ, ըսաւ աղջիկը, մենք արժանի չենք որ դուն մեր տանը ներքեւ գաս : Անձապէս շնորհակալութիւն ունինք ձեռք որ այդչափ հեռու տեղէն եկեր էք մեզ տեսնալու :

Աս ալ պատասխան տրվի ու ըսի, թէ՛ «Իմ՝ Տէրս շատ հեռու տեղէ եկաւ մեզի պէս ողորմելի մեղաւորները տեսնալու համար : Ինքը իր հօրը գիւրդ ձգեց, ու իր փառքը մէկդի դրաւ ու աս անարգ աշխարհքը եկաւ՝ ողորմութեան ու սիրոյ համար : Ու թէ որ մենք ալ իրեն կը հաւտանք, ու իրեն կը հետեինք նէ պէտքը չէ՞ մի որ մէկդմէկու տրկարութիւնը վերցընենք, ու իր ըրածին պէս պըտըտինք աղէկութիւն ընելու :

Հիմայ ան ծերմարդը իր կնիկը ու աղջիկը հետը առած ներս կուգար սրտի մտօք ինձի բարով եկար ըսելու : Անր խօսակցութիւնը շուտով անոնց մեռածին մահվանը վրայ դարձաւ : Ան աղջըկանը Աստուածապաշտ ու զգալի բնաւորութիւնը մասնաւորաբար իր ծնողացը ու ինձի ըսածներուն մէջը յայտնի կը տեսնուէր : Ան աղջըկանը ընտիր իմաստութիւնը ու անուշ բնութիւնը իս շատ զարմացուցին, որոնցմով իր Աստուածապաշտութիւնը ու Արքիստոսի վրայ ունեցած սէրը

կը յայտնէր՝ իրեն ըրած մեծամեծ գթութեանցը համար : Ինքը շատ կը բաղձար որ իմ այցելութեանս պատահութիւնը մէկ բարի վախճանի մը հասնի իրեն համար ալ՝ ու իր ծնողացը համար ալ . սակայն իր վարքին մէջը ամենեւին անվայել մէկ բան մը չի կար յանդգնութեան , մեծամտութեան , կամ ինքնահաւանութեան վերաբերեալ : Ինքը քրիստոնէութեան հաստատութիւնը ու ջերմեռանդութիւնը ունէր կանացի պարկեշտութեամբ . ու որդիական հնազանդութեամբ :

Ընհարին բան էր որ իրեն հետ մէկ տեղ ըլլովէր , ու չի տեսնուէր թէ որչափ ճշմարտաբար իր բնութիւնը ու խօսակցութիւնը ան քրիստոնէական վարդապետութիւնները կը զարգարէին՝ որոնց որ ինքը կը հաւտար : Աս շուտով տեղեկացայ թէ ինքը որչափ բորբոքված ու յաջողակ էր իր ջանքերուն մէջը , իր հայրը ու մայրը ճշմարտութեան ուսմանը ու գիտութեանը առաջնորդելու համար : Աս շատ ազնիւ մէկ դիպուած մըն է մէկ նոր վերստին ծնած քրիստոնէի մը բնութեանը մէջը : Թէ որ Աստուծոյ հաճոյ թուէր իր ողորմութեանը ազատ տնօրէնութեամբը՝ մէկ զաւակ մը իր շնորհքովը կանչելու . քանի որ անոր ծնողքը տգիտութեան ու մեղքի մէջ են , ան ատենը որչափ մեծ է ան զաւակին պարտքը իր կարողութեանը մէջի եղած ջանքը ընելու անոնց փոփոխութեանը համար . որոնցմէ ինքը ծնած է : Արանի է երբոր Աստուծոյ շնորհքը ամէն ժամանակ որդիական սէրը ասանկ է վեցունէ :

Աս երկու ճերունիները յայտնի իրենց աղջկանը վրայ կընայէին , ու անանկ կը սեպէին՝ թէ իբր ան Աստուածային վերաբերեալ բաներուն մէջը իրենց վարժապետը ու խրատիչն էր , սակայն

ինքը կրկին իր որդիական հնազանդութիւնը ու
խոնարհութիւնը ամէն մէկ կերպով իր ծնողացը
կը հատուցանէր, ու շարունակ վերջին աստիճան
կը ջանար անոնց տանը փոքրիկ գործառնութեան
մէջը իրենց ծառայելու ու օգնելու :

Աս աղջկանը Աստուած պաշտութիւնը շատ հո-
գևոր կերպով մը եղած էր, ու չէ՛ թէ հասարակ
աստիճանով մը : Իր մեղաւորները փրկելու հա-
մար ունեցած Աստուածային խորհուրդները շատ
պայծառ էին, ու Սուրբ Գիրքերուն ալ համեմատ :
Ինքը ան ուրախութիւններուն ու տրտմութիւն-
ներուն վրայօք շատ կը լսօսէր, որոնք իր Աստուած-
պաշտութեան վարքին մէջը աղէկ փորձեր էր :

Ինքը կը հաւատար՝ որ սրտին Աստուծոյ հետ
հաւաստի ծանօթութիւնը գլխաւորաբար ասանկ
հաւատքով, Վրիստոսի հետ կեանք անցունելով
կը լայ, որ իրեն նման սիրով ապրելու համար
ջանանք :

Ինքը գիտէր որ Աստուծոյ ունեցած սէրը մեղա-
ւորներուն վրայ, ու անոնց համար սահմանված
պարտականութեանը ճամբան, երկուքն ալ ան-
փոփոխելի բնութեամբ են : Ահ կին վրայ հաւա-
տալի յոյս մը, ու միւսին մէջը բարեբարոյ ըն-
թացք մը ունենալով ինքը կը խնդրէր, ու կը զրտ-
նար “Ան Աստուծոյ խաղաղութիւնը՝ որ ամէն մը-
տած մունքներէ վեր է”, “Ինչու որ ասանկ հանգս-
տութիւն կուտայ իր սիրելիին” :

Ինքը Աստուածաշունչէն՝ ի զատ քիչ գիրքեր
կարդացեր էր, սակայն անոնք ալ շատ աղնիւ էին,
ու անոնց մէջի գրվածները ինքը շատ աղէկ գի-
տէր : Իր Աստուածաշունչէն ու աղօթքի գիրքէն
՛ ի զատ մէկ քանի ուրիշ աղնիւ գիրքեր ալ ունէր
իր գրքատանը մէջը :

Այս անոր դէմքին մէջը մէկ գունաթափ ու տկար երևոյթ մը կը տեսնայի, որ վերջը իմացայ անոր լերդացաւութեան նշան ըլլալը, և ան ատենը կարծեցի թէ ան շատ տարի չի պիտի ապրի: Բարացրնէ Մատուծոյ հաճոյ թուեցաւ որ իմ անոր հետ տեսնելու լէս տարի ու կեսէն ետեւ աշխարհքէս վերցրնէ:

Աս փոքր ու բարի ընտանիքին հետ եղած ատեննիս ժամանակը շուտով կանցնէր, ու անոնց հետ քիչ մը առողջարար ու օգտակար զովացումներ ընդունելուս, ու մէկ քանի ժամուն խօսակցութիւնը վայելելուս ետեւ, հարկաւորեցաւ որ տուն դառնամ:

Նոր հակալ եմ ձեր ինծի ու իմ բարեկամներուս համար ըրած քրիստոնէական մարդասիրութեանը ըսաւ աղջկը, կը հաւտամ Տէրոջը օրհնութեանը որ աս ձեր այցելութիւնը մեզի եկաւ, ու կը յուսամ որ ես ան օրհնութիւնը իմ մէջս ընդունեցի: Անշուշտ գիտեմ որ իմ սիրելի հայրս ու մայրս աս բանը պիտի յիշեն, ու ես ալ ասանկ մէկ պատեհութեան մը համար կուրախանամ, որ ամենեկին առաջ չէի վայելած աս ամեր ներքեւ բարեպաշտ քարոզիչ մը տեսնալով: Իմ Վրկիչս ինծի առատաբար իր բարութիւնը ցըցուց իս «Վիսայրեաց փառի մը պէս կրակէն հանելով» կենաց ու խաղաղութեան ճամբան ինծի սորվեցունելով, և կը յուսամ թէ իմ սրտիս փափաքը աս է՝ որ ես իր փառացը համար պիտի ապրիմ: Բայց ես շատ կը ցանկամ տեսնալ, որ աս սիրելի բարեկամներն ալ հաւատոյ միտթարութիւնը ու զօրութիւնը տեսնան:

Աս ալ ըսի թէ Յայտնի կը տեսնամ որ անոնց համար եղած խոստումը լեցված է թէ «Պիտի ըլլայ որ իրիկվան ժամանակ լոյս պիտի ըլլայ»:

Եւս ատոր կը հաստատւի ըսաւ աղջիկը, ու կը
գովեմ Տէրը ան օրհնեալ ակնկալութեանը հա-
մար:

Եւս Եւսորհակալ եղիր անոր՝ որ դուն անոնք
լուսին բերելու մէկ երջանիկ գործիք մը եղար, ը-
սաւ քարոզիչը:

Կը ըլլամ տէր իմ, բայց երբ որ իմ անարժա-
նութեանս ու տկարութեանս վրայ կը խորհիմ գո-
ղալով կուրախանամ:


Տէր իմ՝ ըսաւ, ան ծեր ու բարի մարդը. ես ա-
պահով եմ որ աս մարդասիրութեանը փոխարէնը
Տէրը ձեզի պիտի հատուցանէ: Աղօթք ըրէ մեզի
համար որ ինչպէս ծեր ու մեղաւոր ենք, սակայն
ինքը կրկին մեր վրայ ողորմութիւն ունենայ վեր-
ջին ժամին մէջը:

Ողորմելի Աղիսարէթը հոգւով մարմնով մեզի
համար ջանք կրնէ: Ինքը ամէն օր չափազանց
կաշխատի մեզ նեղութեանէ ազատելու համար, ու
կը վախնամ թէ բոլոր ինչ որ կրնէ նէ մեզ քաջա-
լերելու կարող չէ. մեզի հետ կը խօսի, մեզի կը-
կարգայ, ու մեզի համար աղօթք կրնէ որ մենք գա-
լու բարկութեանէն փրկուինք: Իրաւքնէ ան չի
գտնուելու մէկ աղջիկ մըն է:

Խաղաղութիւն ըլլայ ձեզի, ու բոլոր ձեր ըն-
տանեացը ըսաւ քարոզիչը:

Եւս անքալ ամէն մէկը ըսին, ամէն շնորհակալ
ենք ձեզի, մեր ազնիւ տէրը:

Եւս անկ ան առեանք մէկը մէկէ զատվեցանք:
Իմ տուն դառնալու ժամանակս մտքիս մէջի եղած
մտածմունքները շատ անուշ՝ և կը յուսամ թէ
շատ ալ օգտակար էին: Ա երջը ուրիշ շատ ան-
գամ աս խաղաղասէր ընտանեացը տեսութեան
կերթայի, ու միշտ էլ կը կ'ըսէր պատճառներ կը-



9886-57 2903

գտնայի Մատուծոյ շնորհակալ ըլլալու ան խօսակցութիւններուն համար, որ ես կը վայելէի :

Ինչ ժամանակէ ետե նայեցայ որ աս աղջկանը առողջութիւնը արագ արագ նուազելու վրայ էր : Ան գունաթափ ու ապականող լերդացաութիւնը՝ որ Տէրոջը մէկ գործիքն է ամէն տարի այսչափ հազարաւոր մարդիկ աս կեանքէն հանելու, շուտով սկսեց զօրանալ իր մաքմոյն վրայ : Ան փոսը ինչած աչվըները, ու աղետալի հազը, ու շատ ժամանակ ան երեսին վրայի շողոքորթող կարմրութիւնը մահուն մօտենալը կը ցուցունէր :

Այս շատ ժամանակ խորհած եմ թէ աս ծիրական ակտին տկարութենէն՝ որ խիստ շատ մարդոց վրայ կը գտնուի, ու երկար կը տևէ, քարոզիչներուն ու քրիստոնեայ բարեկամներուն վերաբերեալ ինչ մէկ պիտանութեան ու սրտեռանդ մտադրութեան ճամբայ մը բացված է : Արդեօք օրըստօրէ որչափ ասանկանդին պատահութիւններ կը կորսուին, ուրտեղ կերևայ թէ Մատուծոյ նախախնամութիւնը ասանկ մէկ նշանաւոր կերպով մը ժամանակ ու միջոց տրված է պիտանի ու Մատուածապաշտ կրթութեանց համար : Արդեօք աս խօսքը որչափ մարդոց կրնայ ըսվիլ թէ «խաղաղութեան ճամբան չեն գիտցած» : Ինչու որ մէկ բարեկամ մը անոնց քովը չէ գացած որ անոնք զգուշացունէ «Ան գալու բարկութենէն փախչելու» :

Իայց աս խաշնարածին աղջիկը յաւիտենական խաղաղութեան վերաբերեալ բաներուն վերայօք երջանկաբար տեղեկացած էր, աս իր հիմակվան մարմնոյն հիվանդութիւնը վրան գալէն առաջ : Արբոր իրեն տեսութեան կերթայի կրնայ ըսվիլ որ ես անոր սորվեցունելէն է վէլ ես ինքս

կըսորվէի : Իր միտքը առատաբար Մատուածային ճշմարտութիւններովը լեցված էր , ու շիտակը ա- նոր խօսակցութիւնը մարդը կըկրթէր : Տակաւին անոր յիշատակութիւնը սրտիս մէջը մէկ շնորհա- կալու զգացում մը առաջ կըբերէ :

(Քր մը իրմէն աս կերպով գրված մէկ համառօտ գիր մը առի :

Աղնիւ Պարոն ,

Շատ ուրախ պիտի ըլլայի թէ որ մէկ ողորմելի անարժան մեղաւորի մը գալերնիդ ու տեսնալնիդ յարմար գատէիք : Դամանակս գրեթէ հատած է , սակայն կը յուսամ , ու կրնամ նկատել որ Վրիս- տօս իմ հոգւոյս պատուական է . ձեր խօսակցու- թիւնը ինծի շատ օգտակար եղաւ , ու հիմայ անոր առաջժընէ էվել կարօտութիւն ունենալս կիմա- նամ : Հայրս ու մայրս իրենց յարգութիւնը ձեզի կըխրկեն :

Ձեր հնազանդ ու անարժան

Աղիսարէթ ծառայէն :

Ին օրվան հրաւերքին հնազանդեցայ : Արբոր ան խաշնարածին խրճիթը հասայ , կնիկը դուռը բացաւ . արցունքները երեսէն վար կըվազէր եր- բոր իր գլուխը անմոռնչ կերերցընէր . սիրտը լեցուն էր . կըջանար խօսելու բայց չէր կրնար : Չեւքէն բռնեցի ու ըսի :

“Իմ աղնիւ բարեկամս , իմաստութեան ու գը- թութեան Տէրօջը ըրածներուն բոլորն ալ արդար են” :

Ահ , տէր իմ , Աղիսարէթս՝ իմ սիրելի աղջիկս անանկ գէշ է , որ չիյտեմ թէ ես առանց անոր ինչ պիտի ընեմ : Արկարծէի թէ ես անկէ առաջ գե- րեզմանը պիտի երթայի :

Սակայն Տէրը յարմար կըտեսնայ որ դուն քու

մեռնելէդ առաջ .քու զաւկիդ անվտանգ փառաց տունը երթալը տեսնաս ըսաւ .քարոզիչը : Արդեօք աս բանին մէջը ողորմութիւն չի կայ մի :

Ահ, աղնուական, ես շատ ծեր ու շատ ալ տկար եմ. ան մէկ սիրելի զաւակ մըն է . ինծի պէս ողորմելի ծեր արարածի մը գաւաղանը ու հաստատութիւնն է :

Արբոր առաջ գացի տեսայ որ Աղիսարեթը կըրակին քովը բարձերով շտկած բաղկաւոր աթոռի մը մէջ կռթնած նստեր էր, որ իր դէմքին վրայ մահճվան մօտենալուն ամէն մէկ նշանները կերևար : Ինծի անանկ կերևար որ ան իրեք կամ չորս շաբաթ հաղիւ կրնար ապրիլ : Մէկ անուշ խրնդումով մը, ու բարեկամական ընդունելութեամբ իր զեղնագոյն երեսը պայծառացուց, երբոր ըսաւ, Տէր իմ, իրաւցընէ իմ ձեզի գրելէս ետեայսչափ շուտով գալերնիդ շատ մէկ մեծ մարդասիրութիւն մըն է : Գուք կըտեսնաք որ ես օր ըստ օրէ կըմաշիմկոր ու հօս երկար ժամանակ չի պիտի կրնամ մնալ : Մարմինս ու սիրտս կըմարինկոր, բայց Աստուած իմ տկար սրտիս զօրութիւնն է, ու կը յուսամ որ ան յաւիտեան իմ բաժինս պիտի ըլլայ :

Աս հետեւեալ խօսակցութիւնը երբեմն երբեմն կընդվիջվէր իր հաղին ու շունչ առնելուն պատճառաւ : Իր ձայնին հնչիւնը յստակ էր, սակայն տկար : Իր կերպարանքը համեստ ու զգաստ էր, ու իր աչվըները թէպէտ առաջվընէ էվել աղօտ էին, սակայն խօսած ժամանակը բոլորովին իրենց պայծառութիւնը չէին կորսնցունէր :

Աս շատ ժամանակ ան իր խորհուրդները յայտնող գերագոյն խօսքերուն վրայօք կըզմայլէի, ու նաև իր դիտաւորութիւններուն վրայ որ Սուրբ

Կրոց խօսքերուն հետ համեմատ էին : Ինքը մէկ բնական աղէկ իմացութիւն մը ունէր , ու շնորհքը՝ ինչպէս որ ընդհանրապէս անանկ կրնէ , շատ զարգացուցեր էր անիկա : Էլ իմաց ես աս մասին անշուշտ սասանկ կըխորհիմ որ ինքը աս ժամանակ յատուկ շնորհք առած էր , կերևար՝ թէ բոլոր բնութեան ու շնորհաց զօրութիւնները հիմայ՝ ի գործ դրված էին :

Արջը աղջրկանը ու մօրը մէջ տեղը նստելէս ետև , (որ վերջինը իր սիրով բորբոքված աչվընէրը մեր խօսակցութեան ժամանակը մեծ հոգով իր աղջրկանը վրայ հաստատեր էր) Աղիսաբէթին ըսի :

Արշուսամ որ դուն Մատուածային ներկայութեանը զգացումը կը վայելեակոր , ու ամէն բան իրեն կը յանձնես , որն որ քեզի հետ էր , ու բոլոր գացած տեղերդ քեզ պահպանեց , ու նաև քեզ ան անարատ զուարճութեանց երկրին մէջ պիտի տանի , ուրտեղ անմահ սուրբերը կը թագաւորեն :

Տէր իմ կը յուսամ թէ ան վերի ըսածներդ կը ըմբողջու պիտի ըլլան : Մտորես երբեմն երբեմն միտքս մ'թնցաւ , բայց կարծեմ թէ քիչ մը մարմնոյս խիստ տկարութենէն ու նեղութենէն ու քիչ մալ հոգևոր թշնամիիս նախանձութենէն աս բանը առաջ եկաւ , որ իսկուղէ համոզել . թէ Քրիստոս իս ամենեկին չի սիրեր , ու ես ինքը լինքս խաբող մէկը եղած եմ :

Բայց դուն անոր յորդորանքներուն կը հնազանդիս մի հարցուց քարոզիչը : Մասնկ անթիւ անցեալ ու ներկայ գթութեան նշաններուն մէջ տեղը կրնան մի տարակուսիր :

Այ , տէր իմ , ես ըստ մեծի մասին կարող եմ անոր սիրոյն յայտնի վկայութիւնը պահելու : Աս

չեմ ուզեր որ անոր իմ հոգւոյս ըրած յայտնի բարութիւնը ուրանալն ալ միւս մեղքերուս վրայ է վեցուցնեմ: Աս անոր փառքը ու գովութիւնը պիտի խոստովանիմ:

Քու հիմակ վան վիճակդ ինչպէ՞ս է առջինին հետ բաղդատելով, երբոր իր շնորհքովը քեզ տակաւին չէր կանչած հարցուց քարոզիչը: Տէր իմ, ես մէկ հպարտ ու անհոգ աղջիկ մըն էի, ու հանդերձի և զարդարանքի շատ բաղձանք ունէի. աշխարհքը ու անոր մէջի եղած բաները կը սիրէի, ու աշխարհային մարդոց մէջ կը ծառայէի, ու ամենեւին անանկ մէկ երջանիկ ընտանիքի մը մէջ մնացած չէի, ուրտեղ Մստուած պաշտութիւնը կընկատվէր, ու ծառաներուն հոգիներուն վրայօք՝ կամ տանը տէրը և կամ տանը տիկինը հոգ կը տանէր: Ընդամ մը կիրակի օր մը եկեղեցի գացի առաւել տեսնալու ու տեսնելու համար, քան թէ աղօթք ընելու կամ Մստուծոյ խօսքը լսելու: Արևոր հէի թէ բաւական բարի էի փրկւովելու: Եւ շատ ժամանակ Մստուածապաշտ մարդիկը կատէի ու անոնց վրայ կը լսնդայի: Աս մեծ խաւարի մը մէջ էի: Քրկութեան ճամբուն վրայօք բան մը չիյտէի: Մամենեւին աղօթք չէի ընէր, ու անաղօթք վիճակին ահարկու վտանգին վրայօք ալ զգացում մը չունէի: Առաջի որ մէկ բարի ծառայի մը պատիւը պահեմ, ու որ ժամանակ որ իս գովէին, անատենը շատ կը հպարտանայի: Արքիս կողմանէ բաւական պարկեշտ ու համեստ էի մարդոց նկատմանը համար, սակայն Մստուծմէ ու Քրիստոսէ օտարական մըն էի. հոգւոյս վրայօք ամենեւին հոգ չէի տաներ. ու թէ որ ասանկ վիճակի մը մէջ մեռնէի դժոխքը իմ բաժինս պիտի ըլլար, ինչպէս որ արգարսպէս արժան էր:

Արչանփի ժամանակ է ան քարոզը լսելնուդ՝ ի վեր որ կը յուսաք թէ Մատուծոյ օրհնութեամբը ձեզ մեղքերնուդ դարձունելու պատճառ եղաւ :

Հինգ տարիի չափ է :

Ինչպէս եղաւ ատիկա :

Օգուցը վեր էր թէ աս անուն մարդը որ նաւով հեռու երկիր մը պիտի երթար քարոզելու, սակայն հովը դէմ ըլլալուն ու չի կրնար երթալուն պատճառը (այս անուն) եկեղեցիին մէջը պիտի քարոզէ : Աստիես ալ ուղեցի որ նոյն եկեղեցին երթամ, շատ աշխարհային մարդիկներ իսխրատեցին որ չերթամ, վախցունելով թէ ան իմ գլուխս պիտի դարձնէ, ինչու որ ըսեր էին թէ ան օտար գաղափարներ ունեցող մէկն է : Բայց հետաքրքրութիւնը ու մէկ նոր շրջազգեստով մը տեսնը վելու պատահութիւնը որոնց շատ կրփափաքէի, իս համոզեցին երթալու համար հրաման առնելու : Իրաւցընէ, տէր իմ, հետաքրքրութենէն ու ունայնութենէն՝ ի զատ ուրիշ առաւել աղէկ շարժառիթներ չունէի, սակայն Տէրօջը հաճոյ թուեցաւ որ աս բանը իր փառացը համար ասանկ տնօրինէ :

Անոր համար ելայ եկեղեցի գացի, ու մէկ մեծ մարդոց բաղմութիւն մը տեսայ որ մէկ տեղ ժողովը վեր էին : Աս շատ անգամ ան ժամերգութեանը սկիզբէն մինչև վերջը իմ մտքիս մէջը ունեցած տարբեր զգացումներուս վրայօք կը խորհիմ : Քիչ մը ժամանակ եղած ժամերգութեանը անմտադիր ըլլալով կայնած չորս կողմս կրնայէի ու կուղէի որ ամէն մարդ իմ վրաս նայի :

Իմ հանդերձս, ան խիստ գեղեցկապարդ ունայնասէր, ու յիմար աղջիկներուն հանդերձներուն պէս, իմ վիճակէս շատ վեր էր, ու մէկ խոնարհ

մեղաւորի մը վայելուէն ալ շատ հեռու էր :
 Հանդերձիս սնտոի զարդարանքներէն մտքիս ինչ
 վիճակի մէջ ըլլալը բաւական յայտնի կերևար :

Ա երջապէս քարոզիչը իր բնաբանը զրուցեց
 «Խոնարհութեամբ զարդարվեցէք», Հոգին ու
 մարմինը ինչպէս հագվեցունելուն մէջ տեղը մէկ
 բաղդատութիւն մը առաջ բերաւ : Անոր խօսքին
 առջի բերնէն սկըսեցի իմ գեղեցիկ հագուստի
 ու հանդերձի համար ունեցած կիրքիս վրայօք ա-
 մօթ մը զգալ :

Եւ այց երբօր ան փրկութեան հարդերձին վրա-
 յօք նկարագրելու սկըսեց՝ որով մէկ քրիստոնեայ
 մը կը հագվի, ան ատենը իմ հոգւոյս մերկութիւնը
 շատ յայտնի զգացի : Այլեցայ թէ ոչ ան զուր-
 ցըված բնաբանին մէջի խոնարհութիւնը ունէի,
 ու ոչ ալ ճշմարիտ քրիստոնէի մը բնութեանը մէկ
 մասը : Իմ գեղեցկազարդ հանդերձիս վրայ նա-
 յեցայ ու հպարտութեանս համար ամչնալով
 կարմրեցայ : Քարոզիչին նայեցայ, ու ինծի ա-
 սանկ կերևար որ ան երկինքէն հրեշտակի մը պէս
 խրկրված էր իմ աչվըներս բանալու համար : Եր-
 ղովուրդօքը վրայ նայեցայ ու զարմացայ թէ ար-
 դեօք ուրիշ ինծի պէս զգացող մալ կ'ա՞յ մի : Երբօր
 սրտիս վրայ նայեցայ չարութիւնով լեցուն երև-
 աց : Քարոզած ժամանակը կը դողայի, սակայն
 կիմանայի որ սիրտս անոր զրուցած խօսքերը կըն-
 գունէր :

Ան՝ Աստուածային շնորհացը հարստութիւնը
 բացատրեց թէ ինչ եղանակաւ Աստուած մեղա-
 ւորը կը փրկէ : Աս զարմացած մնացի բոլոր ան բա-
 ներուն վրայ որ իմ կեանքիս մէջը ըրեր էի : Ան
 Քրիստոսի հեղ, նուաստ ու խոնարհ օրինակը նը-
 կարագրեց, ես իմ անձիս հպարտ, ամբարտաւան

և ունայնասէր ըլլալը իմացայ : Ան՝ Վրիստոսի «Կամաստութիւն» ըլլալը ցուցուց . ես իմ ազխտութիւնս զգացի : Ան՝ Վրիստոսի «Արդարութիւն» ըլլալը քարոզեց . ես իմ յանցաւոր ըլլալս վկայեցի : Ան՝ Վրիստոսի «Արբութիւն» ըլլալը հաստատեց , ես իմ ազականութիւնս տեսայ : Ան՝ աւնոր «Փրկութիւն» ըլլալը յայանեց . ես իմ մեղքին գերի՝ ու Աստանային ծառայ ըլլալս իմացայ : Ան՝ մեղաւորներուն համար մէկ ազգու զուրուցվածքով մը իր քարոզը վերջացուց , ու անոնք յորդորեց որ ան գալու ըտրկութենէն փախչին , ու արտաքին զարգարանքներուն սէրը մէկզի ձգեն . և Վրիստոս հագնին . ու խոնարհութեամբ զարդարվին :

Ան ժամէն ՚ի վեր իմ հոգւոյս արժողութեանը ու մէկ մեղանչական վիճակի մը վտանգին վրայօք խորհելու ամենէին զանցառութիւն չեմ ըրած : Արտիզիէս Աստուած կօրհնէի ան քարոզին համար , սակայն միտքս մեծ խռովութեան մէջ էր :

Վարոզիչը՝ ան իմ սրտիս իշխող կիրքը առաջ բերաւ , որ արտաքին զարգարանքի մէջ մէկ պարծանք մըն էր , ու անիկա Աստուծոյ շնորքով իմ հոգիս արթնցունելու գործիք մը եղաւ : Տէր իմ , երանի պիտի ըլլար . թէ որ ան ողորմելի աղջիկներէն շատերը ինծի պէս արտաքին զարգարանքներու ու գեղեցիկ հագուստներ հագնելու փափաքէն գառնային , ու միայն անիկա փնտռէին , որ անապական է . ու նաև ան հեղ ու հանդարտ հոգւոյն զարգարանքները՝ որ Աստուծոյ առջին շատ յարգի են :

Ժողովուրդին մեծ մասը՝ ասանկ ճշմարիտ ու Աստուածաշունչի վերաբերեալ քարոզներու ան-

վարժ ըլլալով՝ քարոզիչը կատէին ու անոր սաստկութեանը համար տրտունջ կընէին . սակայն վերջը ինծի պէս մէկ քանի հոգի գտայ որոնց շատ ներգործեր էր , ու ջերմեռանդ սրտով կրկին կուղէին անիկա լսելու : Բայց ան մէյմալ հոն չի քարոզեց : Ան ժամանակէն մէկ առանձին աղօթքի՝ կարգալու ու մտածութեան ընթացքով մը իմ կորուսեալ մեղաւորի մը վիճակս տեսնալու առաջնորդը վեցայ , ու Հիսուսի Վրիստոսի միջնորդութեամբը՝ ան Աստուծոյ ամենամեծ գթութիւնը ինծի պէս մեղանշական հոգը ու մոխիրը երկինքի մէջի ան փառաւոր երջանկութեանը բաժինին հաղորդ ըրաւ . և ոչ , Տէր իմ , ինչ մէկ Վրկիչ մը գտայ : Ան իմ խնդրածէս կամ ուղածէս շատ էվել է : Բոլոր իմ աղքատութեանս կարօտութիւնը անոր լիութեանը մէջը գտայ , բոլոր մեղքին ու տրտմութեան համար իր մէջը մէկ հանգստութեան տեղ մը գտայ , իր խօսքին մէջը մէկ զօրութիւն մը գտայ տարակուսութեան ու անհաւատութեան դէմ :

Ատքը իրեն հարցուց քարոզիչը . թէ քիչ ժամանակէն չի տեսար մի որ քու փրկութիւնդ՝ Աստուծոյ կողմանէ բոլորովին շնորհաց մէկ գործը եղած պիտի ըլլայ , ու ոչ թէ քու առջի գործքերուդ կամ արժանաւորութեանդ համար :

Այնիւ տէր իմ , իմ գործքերս ան քարոզը լսելես առաջ ի՞նչ էին , միայն գէշ , մարմնաւոր , անձնասէր , ու անաստուած գործքեր էին : Եւ սրտիս խորհուրդները մանկութենէս ի վեր միօրինակ չար էին : Եւ արժանաւորութիւնս ինչ էր , և անանկ մէկ ապականեալ ու անփոյթ հոգիին վաստակը ի՞նչ կրնար ըլլար որ ոչ օրէնքին կրնայի ու ոչ ալ աւետարանին : Այ՛ո՛ տէր

իմ , ես իսկոյն նկատեցի որ իմ փրկութիւնս Աստուծոյ ազատ շնորհքովը եղած պիտի ըլլայ . անոր համար բոլոր ան գործքին գովութիւնը ու պատիւը առջինէն մինչև վերջը իրեննր պիտի ըլլայ :

Աշխարհի վերաբերեալ ինչ փոփոխութիւն տեսարքու սրտիդ մէջը :

Ան ինծի բոլորովին ունայնութիւն ու նեղութիւն երևաց : Հարկաւորեցաւ որ իմ մտքիս խաղաղութեանը համար անոնց մէջէն ուրս ելլեմ ու հրաժարիմ : Ենքրզինքս աղօթքի տրվի , ու Աստուծոյ հետ հաղորդութիւն ընելով , գաղտնի զուարճութեան շատ թանկագին ժամեր կը վայելէի : Հատ անգամ իմ մեղքերուս վրայ սուգ կընէի , ու երբեմն ալ մէկ մեծ պատերազմ մը կ'ունենայի իմ անհաւատութեանս , երկիւղիս ու փորձութեանս պատճառաւը կրկին ան առջի ճամբաներուս մէջը գտնալու , ուր տեղ շատ տեսակ դժուարութիւնները կը գտնուէր :

Եայց ան՝ որ իս մէկ յաւիտենական սիրով մը կը սիրէր իր քաղցրիկ մարդասիրութեամբը , իս ետ կը քաշէր , խաղաղութեան ճամբան ինծի կը ցուցունէր . մտացս հաստատութիւններուն մէջը իս քիչ քիչ կը զօրացունէր մէկ նոր կեանքի՝ մը առաջնորդելով . ու ինծի կը սորովը ցունէր որ թէ պէտ առանց իրմով մէկ բան մը ընելու կարողութիւն չունէի , սակայն իր զօրութեանը միջնորդութեամբը ամէն բան ընելու կարող պիտի ըլլայի :

Քու վիճակիդ մէջը շատ դժուարութիւններ չի գտար մի , առջի սովորութիւններէդ ու ըրածներէդ փոխվելուդ համար :

Այո՛ տէր իմ , ամէն օր : Ամանք վրաս կը խընդային , ուրիշները կը յանդիմանէին . թշնամի-

ները ծաղը կրնէին, ու բարեկամները կը գթային :
 Իս կեղծաւոր, սուտ, խաբեբայ կրկանչե-
 ին, ու ուրիշ շատ անուններ վրաս կը դրնէին. որ
 ասոնք ըսելով՝ կուղէին իս աշխարհին առջին ա-
 տելի երեցրնել : Սակայն ես ան խաչին նա-
 խատինքը մէկ պատիւ մը կը սեպէի : Իս հալա-
 ծողներուն համար աղօթք կրնէի, ու անոնց կը-
 ներէի, ու միտքս կը բերէի թէ քիչ մը ժամանակ
 առաջ ես ալ ուրիշներուն նոյն բանը կրնէի :
 Այս ես կը խորհէի թէ Վրբիստոս մեղաւոր ե-
 րուն ընդդիմութեանը համբերութիւն ըրաւ, ու
 ինչպէս որ աշակերտը իր տէրոջմէն վեր չէ, ա-
 նանկ ալ ես իր չարչարանացը որ ե իցէ կերպիւ
 նմանութիւն ունենալու համար շատ կուրախա-
 նայի :

Արեմն քու տանդ մէջը եղող մեղաւորներուդ
 համար չէի՞ր մի ջանար :

Ե՛ս տէր իմ, իրաւցրնէ շատ կը ջանայի. ա-
 նոնք ամենեւին միտքէս չէին ելլեր, անոնց համար
 շարունակ աղօթք կրնէի, ու ջերմեռանդ բաղ-
 ձանք մը ունէի անոնց աղէկութիւն ընելու : Ես
 մեծի մասին իմ հօրս ու մօրս համար շատ կը ջա-
 նայի, որ օրքստօրէ կը ծերանային, ու հաւատոյ
 մասին մէջն ալ շատ տղէտ ու կոյր էին :

Մայրը իր աղջրկանը խօսքը ընդմիջելով ու
 հառաջելով մը ըսաւ, իրաւցրնէ Տէր իմ, մէնք
 շատ տղէտ, կոյր, մեղանչական, ու թշուառ է-
 ինք. մինչև որ Յիսուս Վրբիստոս աս սիրելի
 աղջիկը՝ իր ողորմելի հօրը ու մօրը տունը ըն-
 րաւ :

Այ սիրելի մայր իմ ըսաւ աղջիկը, առաւել
 պարտիք ըսել թէ՛ Յիսուս Վրբիստոս ձեր ողոր-
 մելի աղջիկը ձեր տունը բերել արվաւ, որ իր

հոգւոյն ինչ ընելը ձեզի զրուցէ , և կը յուսամ
թէ հիմայ նոյն բանը ձեր հոգիներուն ալ ըրաւ :

Ըս վայրկեանին մէջը մէյմալ նայիս որ խաշ-
նարածը դռնէն ներս մտաւ : Ինքը ան կէս բաց-
ված դռանը ետեւը մէկ քանի բոպէ կայնած՝ իր
կնկանը ու աղջըկանը վերջին զրուցած խօսքերը
մտիկ ըրաւ :

() րհնութիւն ու գթութիւն գայ աս աղջկա-
նը վրայ ըսաւ ինքը . իրաւցընէ ինքը դիտմամբ
իր ծառայութեան գեղեցիկ տեղը ձգեց մեր հե-
տը քնակելու համար , որ մեր հոգիին ու մարմի-
նին օգնութիւն ընէ : Տէր իմ ան շատ հիւանդ
չերեարկո՞ր մի : Արարծեմ թէ ան հոս շատ չի
պիտի մնայ :

Ետիկա Տէրոջը յանձնեցէք ըսաւ Աղիսարէ-
թը : Բոլոր մեր ժամանակները անոր ձեռքին
մէջն է , ու ասանկ ըլլալուն համար ալ մենք մեզ
շատ երջանիկ պիտի համարինք : Աս կուզեմ
երթալ . դուն չե՞ս մի ուզեր ո՞վ իմ հայրս՝ իսա-
նոր ձեռքին մէջը յանձնելու , որ ինքը իս առաջ
քեզի պագեեր էր :

Աղիսարիս մէջը ատկէ ՚ի զատ ուրիշ խօսք չի
գտար հարցունելու ըսաւ ան լացող հայրը :

Աս գիտեմ , ըսաւ աղջիկը , որ դուն իմ երջա-
նիկ ըլլալս կուզես :

Այո՞ կուզեմ , պատասխանեց հայրը , ինչպէս
որ Տէրոջը հաճելի է անանկ թող ընէ՝ . քեզի ալ
մեզի ալ :

Ան ատենը իրեն հարցուցի , թէ արդեօք իր
այժմեան միտիւթարութիւնները գլխաւորաբար
ի՞նչ բանի վրայ հաստատած էր՝ մահվան մօտե-
նալուն ակնկալութեանը մէջ :

Բոլորովին տէր իմ , Վրիստոսի վրայ : Ար-

բոր ինքըզինքիս վրայ կրնայիմ մեղքիս շատու-
 թիւնները՝ տկարութիւններս՝ ու պակասութիւն-
 ներս Վրիստոսի պատկերը կաղօտացընեն, որն
 որ բուն իմ սրտիս մէջը տեսնալ կուզեմ : Բայց
 երբոր Վրկիչին իրեն կրնայիմ, ինքը բողորովին
 սէր կերևայ, ոչ իր դէմքին մէջը մէկ բիծ մը կայ,
 և ոչ ալ իր կատարելութեանցը մէջ մէկ մթու-
 թիւն մը : Ընոր մարմնով աշխարհք դալուն վը-
 րայօք կըխորհիմ, ու իս ան մարմնոյն չարչա-
 րանացը հետ կըհաշտեցընէ ինչու որ ան ալ ինծի
 պէս նեղութիւն քաշեց : Ընոր փորձութիւն-
 ներուն վրայօք կըմտածեմ, կըհաւատամ որ ես
 ալ փորձութեան մէջ ինկած ատենս ինքը ինծի
 ձեռնտու կրնայ ըլլար :

Ընոր խաչին վրայօք կըմտմտամ ու իմիններս
 համբերութեամբ տանիլ կըսորվիմ : Ընոր մահ-
 վանը վրայ կըմտածեմ ու մեղքին համար մեռ-
 նելու կըբաղձամ, որ ան իմ վրայ ալ էվէլի իշ-
 խանութիւն չունենայ : Աս երբեմն անոր յա-
 րութեանը վրայօք կըմտմտամ ու կըյուսամ որ
 անկէ ինծի բաժին մը հանած է, ինչու որ իմ
 սէրս ու փափաքս երկնային բաներուն վրայ է :
 Վլխաւորաբար անոր վրայօք խորհելով կըմխի-
 թարվիմ որ ինքը հօրը աջ կողմն է, ու ինծի
 համար բարեխօսութիւն կընէ, ու կըյուսամ որ
 ան ինծի համար ու իմ սիրելի բարեկամներուս
 համար ըրած տկար աշօթքներս անգամ ընդու-
 նելի պիտի ընէ :

Ըհա ասոնք են իմ խորհուրդներս, որոնք ո-
 ղորմութեան միջնորդութեամբը՝ իմ Վրկիչիս
 բարերարութեանը համար ունիմ, ու անոնք ին-
 ծի ուզել ու ջանալ տրվին, որ իմ խեղճուկ ճամ-
 բուս մէջը իրեն ծառայեմ, ու ինքըզինքս իրեն

տա՛մ , ու ան վիճակ կեանքին մէջը աշխատիմ իմ պարտականութիւնս կատարելու , որուն մէջը իրենն հաճոյ թուեցաւ իս կանչելու :

Հաղարաւոր անգամ պիտի իյնայի ու մարէի թէ որ ան իս զօրացուցած չըլլար : Աղէկ գիտեմ որ ես առանց անոր ոչինչ եմ : Ան ամէնը՝ ու ամէնուն մէջն է : Արչափ որ իմ հոգս ու մտմտութիւնս իրեն վրայ կը ձգեմ , այնչափ զօրութիւն կը գտնամ իր կամքը կատարելու : Արանի թէ ինքը ինծի շնորհք տայ որ մինչև վերջին վայրկեանին մէջը իրեն ապաւինիմ : Աս մահէն չեմ վախնար՝ քանզի կը հաւատամ որ ինքը անոր խայթը մէկտի վերուց : Աւ ո՛հ , գերեզմանէն անդին ինչ երջանկութիւն կայ :

Ասէ տէր իմ , արդեօք շիտակ չե՞մք : Կը յուսամ թէ ամենեւին խարէութեան տակ չեմ : Աս իմ ակնկալութեանս համար Վրիստոսի ամենառատ լիութենէն՝ ի զատ ուրիշ բանի մը չեմ համարձակիր նայելու :

Արբոր բուն իմ սրաիս հարցում մը ընելու ըլլամ , անոր ապաւինելու կը վախնամ , ինչու որ ան նենգաւոր է , ու շատ անգամ իս խաբած է : Բայց երբոր Վրիստոսի աղաչեմ . ան խոստումներով ինծի կը պատասխանէ , որոնք իս կը զօրացնեն ու կը զովացնեն , ու իր փրկելու զօրութեանը ու կամքին համար ամենեւին ինծի տարակուսութեան տեղ չեն թողուր : Աս անոր ձեռքին մէջն եմ , ու հոն կուզեմ մնալ , կը հաւատամ որ ան իս ամենեւին երեսէ չի պիտի ձգէ ու մոռնայ , հապա ինչ որ ինծի կը վերաբերի ան պիտի կատարէ : Ինքը իս սիրեց , ու ինծի համար ինքը զինքը տրվաւ , ու կը յուսամ որ իր պարգեները ու կոչումը առանց ապաշխարութեան

են : Ըստ ակնկալութեանը մէջը կապրիմ, ու ասոր մէջը կըրցանկամ մեռնելու :

Ըղջկանը խօսած ժամանակը չորս կողմս կընայէի ու կըխորհէի՝ թէ իրաւցընէ աս տեղը Ըստուծոյ տունէն ու երկինքի դուռնէն՝ ի զատ ուրիշ տեղ չէ : Ըմէն բան մաքուր, գեղեցիկ կերևային : Ընօրը ամպային մէկ մութ օր մըն էր, սակայն աս ժամանակ արեգակը որ մարը մտնալու մօտ էր մէկէն՝ ի մէկ լուսափայլ սենեակին մէջը ծագեց :

Ըստ մարը մտնող արեգակին ճառագայթը ան պատանի Վրիստոնեային հրաժարվելու ժամանակին պայծառ ու զուարթ վախճանը կընշանակէր : Ընանկ պատահմամբ շառաւիղին մէկը պղտիկ հայելիի մը վրայ ցալթեց ու անկէ անոր լոյսը ան պատանի աղջկանը երեսին վրայ զարկաւ :

Ընոր դեղնած ու աւրըված պատկերին մէջը՝ Ըստուծոյ կամքին խաղաղ հնազանդութիւն մը, յաղթողական վստահութիւն մը, անկեղծ խոնարհութիւն մը, ու մէկ փափուկ անձկութիւն մը կերևար, որոնք յայտնի իր սրտին զգացումները կըրցուցընէին :

Վիչ մը առաւել սրտեռանդ խօսակցութիւն ու համառօտ ազօթք մը ընենլուս ետե մէկզմէկէ զատվեցանք :

Ըրբոր բնական տեսարանը Վրիստոնեական հայելիի մը մէջ նայվելու ըլլայ, շատ անգամ Ըստուածային ճշմարտութեանը ամենագեղեցիկ վկայութիւնները յայտնի կըրցուցընէ : Անծ շնորհք մը գտած կըլլանք երբոր անօնք վայելելու կարողութիւն ունենանք, ու նոյն ժամանակը անօնցմով Ըստուծոյ կըմօտենանք :

Մսկէ քիչ մը ժամանակ ետքը ես եւս մէկը եկաւ որ իմ պատանի բարեկամիս հոգեվարք ըլլալը ինծի իմացընէ : Մս խօսքը մէկ զինուոր մը բերաւ որուն գէմքը իր լըջութիւնը՝ բարեմտութիւնը ու Մստուածպաշտութիւնը կը յայտնէր :

Տէր իմ ըսաւ զինուորը , իս Աշխարհէթիւն հայրը ու մայրը խրկեցին անոր յատուկ աղաչելովք . որ զուցեմ թէ բոլորն ալ ձեզ որչափ կուզեն տեսնալ : Կրաւցընէ , ինքը շատ շուտով իր երկնային տունը երթալու վրայ է :

Շատոնցվընէ անիկա կը ճանչնա՞ք մի հարցուցի իրենն :

Մէկ ամիսի չափ է , տէր իմ , ես հիւանդի տես երթալը շատ կըսիրեմ ըսաւ զինուորը . ու աս աղջկանը վրայօք մէկ բարեպաշտ մարդէ մը լսելով որ մեր բանակին քովը կը բնակի , զինքը տեսնալու գացի : Աս իմ երթալուս համար Մստուած կը փառաւորեմ :

Մն աղջկանը խօսակցութիւնը ինծի շատ օգուտ ըրաւ : Մն տանը իրեն ըսի թէ ես շատ ուրախ եմ որ ձեզի պէս մէկ եղբայր զինուոր մը տեսայ . թէպէտ մենք զրսրվանց զինուորական հանդերձով մէկզմէկէ կը տարբերինք , սակայն կը յուսամ թէ երկուքս ալ նոյն հոգևոր զօրապետին կը ծառայենք , եկոր մէկ տեղ երթանք ըսի իրեն , ձիւրս շուտով պատշաաստը վեցաւ :

Իմ պատերազմական ընկերս քովէս կը քալէր . ու շատ սրտառուչ ու Մստուածապաշտ խօսքերով իս կը զուարճացընէր : Ինքը ան խաշնարածին աղջկանը ազնիւ բնաւորութեանը վրայօք մէկ քանի երեւելի վկայութիւններ կը պատմէր . որոնք կերևային թէ անոր հետ նոր բարեկամութիւն ընելէն ըսած պիտի ըլլար :

Այն մէկ պայծառ անդամանդ մըն է, ըսաւ զինուորը, ու քիչ ժամանակէ ետեւ աշխարհիս վերայի գտնելած անդամանդներէն էլեւ պայծառ պիտի փայլի :

Այ տեսակ խօսքերով մէկ տեղ երթալը ճամբուն հեռաւորութիւնը մեղի չիմացուց, ու գրեթէ մինչև խաչնարածին խրճիթին առջևը հասանք, յայտնի մեր ճամբորդութեան ժամանակը կարճըցուց :

Արբոր տանը մօտեցանք՝ բոլորովին լսեցինք, որ մէկ հիւանդ պառկած հաւատացեալի մը տուն տեսնալով՝ մահճան, յաւիտենականութեան, ու փրկութեան խորհուրդները շարժւելեցան. ու իմ միտքս և անտարակոյս իմ հետի ընկերիս ալ միտքը լեցուցին :

Մինչև հիմայ մէկ կենդանի էակ մը չէր երևար բացի ան խաչնարածին շունէն՝ որ մէկ լուիկ պահպանութիւն մը կրնէր դռանը առջին, ինչու որ քովը մօտեցած ժամանակս առջի պէս չէր հասեր : Արևար թէ յատուկ ան ընտանիքին վիճակին զգացումներուն հետ հաղորդութիւն ունէր, որ չէր ուզեր անանկ մէկէն՝ ի մէկ աղետալի ձայն մը հանել : Ինքը դէպի ան փոքրիկ դռանը քով եկաւ ու անկէ տանը դռանը նայեցաւ իբրև անոր մէջի եղած տրտմութեանը վրայօք տեղեկութիւն ունեցողի մը պէս : Իբր թէ կուզէր ըսել որ «Արբոր տրտմութեան տունէն ներս մանալու ըլլաք կամաց կոխեցէք. քանզի տէրօջս սիրտը սուգով լեցուն է» :

Արևար թէ բոլոր ան տեղը երևելի խաղաղութիւն մը պատեր էր : Միայն ան հեղեկ հողմը երբեմն կրխափանէր անիկա տանը մօտ եղող կնձնի ծառերուն մէջէն անցնելով, որոնք կրխոր-

չէր թէ տրտմութեան ցաւալի հառաջանքներ էին : Աամաց մը դուռը բացի սակայն մէկը չէր երևար , բոլորն ալ տակաւին լուռ կեցեր էին : Օ՛հնուորը ետեւէս երկուքս ալ սանդուղին առջին եկանք :

Ահան եկան ըսելով մէկ ձայն մը ելաւ , որ իմացայ թէ հօրը ձայնն էր :

ՂԱնքը սանդուղին վերի գլուխը տեսայ . ու երբոր վերի սենեակը մտայ տեսայ որ ան ծեր մայրը ու իր տղան ան սիրելի աղջկանը օգնութիւն կրնէին : Տղին կնիկը իր երեխան ծնկանը վրայ առած պատուհանին առջին նստած կուլար , երկու կամ իրեք մարդ ալ սենեակին մէջը կայնած պէտք եղած պաշտօնը կրնէին որ բարեկամութիւնը ու հարկը կրպահանջէր :

Այս անկողինին քովը նստեցայ : Մայրը չէր կրնար լար . բայց երբեմն երբեմն խորունկ կըհառաջէր երբոր մէյմը ինծի ու մէյմալ Աղիսաբէթին կրնայէր : Աղբօրը երեսն 'ի վար խոշոր արցունքներ կըվազէր որ անոր վրայ մեծ սէրմը ունենալը կըվկայէր : Ան բարի ծեր մարդը անկողինին ոտքին տակը կայներ էր անկողնարանին սիւնին կռթնած , ու չէր կրնար աշվըները իր զաւկին վրայէն հեռացընէր . ուրկէց որ քիչ ժամանակէ ետե պիտի զատվէր :

Աղիսաբէթին աշվըները գոց էին , ու տակաւին ինքը իս չէր տեսած : Ար երեսը թէպէտ ներս քաշված ու դեղնած էր , սակայն Մատուծոյ խաղաղութիւնը՝ որ ամէն մտածմունքներէ վեր է , անոր վրայ մէկ յաղթողական հանդարտութիւն մը ձգած էր :

Օ՛հնուորը քիչ մը կայնելէն ետե լռիկ կերպով մը իր Մատուածաշունչը ինծի տըվաւ իր մատովը

ան 1 կորն" 15 գլ" 55, 56, 57 համարները ցուցնելով : Ան ատենը աս վկայութիւնները կարգալով լուութիւնը խափանեցի "ՎՎ մահ ^ն ր է քու խայթոցդ, ո՛վ գերեզման ^ն ր է քու յաղթութիւնդ : Սահման խայթը մեղքն է, ու մեղքին զորութիւնը օրէնքը : Բայց շնորհակալութիւն ըլլայ Աստուծոյ՝ որ Տէր Յիսուս Վրիստոսի միջնորդութեամբը մեզի յաղթութիւն կուտայ" :

Աս խօսքերուն ձայնէն անոր աչվ ընկերը բացվեցան, ու երբոր աս խօսքը ըսաւ թէ "Յաղթութիւն, յաղթութիւն" Տէր Յիսուս Վրիստոսի միջնորդութեամբը, ան ատենը կարծես թէ Աստուածային լուսոյ՛ մէկ շառաւիղին պէս բան մը անոր երեսին վրայ ճառագայթեց :

Ա երջը կրկին առանց ան տեղի գտնելուն րուն մէկին վրայ տեղեկութիւն մը ունենալու, ես ալ ըսի, օրհնեալ ըլլայ Տէրը ան հաւատքին յաղթութեանը համար :

Ամէն, ըսաւ զինուորը :

Ան խաշնարածին աչվները որ ամենեին իր աղջկանը վրայէն վեր չէր առներ՝ կը ցուցնէին որ ան զինուորին ըսած "Ամէն" բառը իր սրտին մէջէն էր, սակայն լեզուն տկարացեր էր անիկա արտասանելու :

Աս միջոցիս որ ան հոգեվարք պատանին քիչ մը շունչ առնելու համար աշխատութիւն կընէր, որ քիչ մը ժամանակէն ետե բոլորովին կարեցաւ, իրեն ըսի. Ի՛մ ազնիւ բարեկամս, չն^ս մի զգար որ Տէրը քեզի օգնութիւն կընէ :

Այո՛, ան ինձի հետ շատ մարդասիրութեամբ կը վարվի, պատասխանեց ինքը :

Անոր խոստմունքները հիմայ քեզի շատ յարգի չե՞ն մի :

Ե՛յո՛ւ, բոլորն ալ յարգի են Յիսուս Քրիստոս
սով :

Հատ մարմնաւոր ներդուծեան մէջ ե՞ս մի
հարցուց քարոզիչը :

Ենանկ քիչ, որ գրեթէ կըմոռնամ, Տէրը որ-
չափ բարի է, ու ես որչափ անարժան եմ՝ ըսաւ
աղջիկը :

Ենոր ինչպէս ըլլայը գուն պիտի տեսնաս՝ ը-
սաւ քարոզիչը :

Կարծեմ, կը յուսամ, ու կը հաւատամ որ պիտի
տեսնամ ըսաւ աղջիկը . և կրկին սկսեց մրափել :

Սօրը վրայ նայելով ըսի . ինչ մէկ ողորմու-
թիւն մըն է՝ քու զաւկիդ պէս երկինքին մօտե-
ցող մէկ զաւակ մը ունենալը :

Եւ ինչ մէկ գթութիւն մը կը լլար, ըսաւ մայ-
րը մարած ձայնով մը, թէ որ իր ողորմելի ծեր
մայրն ալ անոր ետեւէն հոն երթալու ըլլար :

Սակայն տէր իմ, մէկզմէկէ զատուիլը շատ
գժուար բան է :

Կը յուսամ թէ շնորհքին միջնորդութեամբը
հաւատքով քիչ ժամանակէն մէկզմէկ պիտի գրտ-
նաք, որ ամենեկին զատուիլ չի կայ, ու ան հիմակ-
վան եղածն ալ քիչ ժամանակ պիտի քշէ :

Տէր իմ, ըսաւ խաշնարածը ատ խորհուրդը իս
կըզօրացունէ, ու Տէրոջը բարութիւնը՝ առջինէն
էվել համոզված ըլլալս ինծի կիմացունէ :

Հայրս ու մայրս, ըսաւ ան կրկին զօրացած աղ-
ջիկը . Տէրը ինծի բարի է, անոր ապաւինեցէք,
անիկա յաւիտեանս գովեցէք :

Տէր իմ, ըսաւ աղջիկը մարած ձայնով մը, ես
կուզեմ ձեռնէ շնորհակալ ըլլալ ան ձեր ինծի
ըրած մարգասիրութեանը համար : Չենէ ուրիշ
մէկ շնորհք մը խնդրելու եմ . ինչպէս որ իմ քույր

Թաղեցիրնէ, արդեօք անանկալ նոյն բանը ինծի պիտի ընես մի :

Այո՛, ամէն բան քու ուղածիդ պէս պիտի ըլլայ ըսի իրեն, թէ որ Աստուած կամենայ :

Շնորհակալ եմ տէր իմ շնորհակալ եմ, սակայն ուրիշ մէկ աղաչանք մընալ ընելու եմ ձեզի : Արբոր ես երթալու ըլլամ, յիշէ իմ հայրս ու մայրս . թէպէտ անոնք ծեր են, բայց կըլուսամ թէ ան բարի գործը անոնց հոգիներուն մէջը սկսած է : Իմ աղօթքներս լավեցան . կաղաչեմ որ երբեմն անոնց տեսու թեան գաք . ես չեմ կրնար շատ խօսիլ սակայն անոնց համար կուզեմ խօսիլ . տէր իմ անոնք միտքէդ մի՛ հաներ :

Հիմայ ան ծեր ծնողքները կըհառաչէին ու բարձրըկէկ ձայնով մը կըխօսէին, որ երբեմն իրենց խօսքը կընդմիջէր, և աս կերպ ընելովնին իրենց զգացումներէն քիչ մը թեթեւութիւն կառնէին :

Սերջապէս Աղիսաբէթին ըսի, քու փրկութեանդ վրայօք մէկ տարակոյս մը կամ փորձութիւն մը կըտեսնասկոր մի :

Ոչ, տէր իմ, Աստուած ինծի հետ շատ մարդասիրութեամբ կըվարվի, ու ինծի խաղաղութիւն կուտայ :

Ինչպէ՞ս են քու խորհուրդներդ ան մահվան խաւար ձորին վրայօք, որուն մէջէն հիմայ կանցնիսկոր՝ հարցուց քարոզիչը :

Ան մութ չէ ըսաւ աղջիկը . ի՞նչու համար մութ պիտի ըլլայ, իմ Տէրս հոն է, ու ան իմ լոյսս ու փրկութիւնս է :

Մարմնաւորնեղութեան վրայօք առաւել երկիւղ մը ունի՞ս մի՞ հարցուց քարոզիչը :

Տէրը՝ ինծի հետ շատ սիրով կըվարվի . ես իրեն կապաւինիմ, ըսաւ աղջիկը :

Աս խօսքերը ըսելէն ետքը սաստիկ դող մը եկաւ վրան . բայց երբոր անցաւ , աս խօսքերը շատ անգամ կրկրկնէր , “Տէրը ինձի հետ շատ սիրով կրվարվի . Տէր , ես քուկդ եմ . իս փրկէ . Ամենօրհնեալ Հիսուս . Ազնիւ Փրկիչ . Անոր արիւնը բոլոր մեղքերը կըսրբէ . զիս իրմէն ո՛վ պիտի զատէ . Իրեն անունը զարմանալի է . Շնորհակալութիւն ըլլայ Աստուծոյ . Ան մեզի յաղթութիւն կուտայ . Աս անգամ փրկըվեցայ . Ավ շնորհք , գթութիւն , Տէր , հոգիս ընդունէ :

Ազնիւ տէր իմ , սիրելի ծնողքներս , յարգի բարեկամներս , ես կերթամկոր , սակայն բոլորն ալ բարի են :

Ինքը կրկին տկարցաւ . մենք ծունկ չողեցինք աղօթք ընելու , ու Տէրը մեր մէջն էր , ու մեզ կօրհնէր :

Աս քանի որ հոն էի՝ ան կրկին չի զօրացաւ , ու մէկ հասկցվելու խօսք մալ չի խօսեցաւ : Ինքը տասը ժամի չափ մրափեց , ու վերջը քաղցրիկ կերպով մը Տէրօջը թեւերուն վրայ քնացաւ , որ իրեն հետ այնչափ սիրով վարվեր էր :

Իր խօսքը դադարելէն մէկ ժամ մը ետե դուռնէն դուրս ելայ , ու մնաս բարով ըսելու ժամանակս ձեռքը բռնեցի ու ըսի “Բրիստոս է յարութիւնը ու կեանքը” :

Ան ալ իմ ձեռքս կամացուկ մը սխմեց , սակայն ոչ իր աչվըները կրնար բանալ , ու ոչ ալ մէկ բան մը խօսելու կարողութիւն ունէր : Աս ասկէց առաջ ասոր նման՝ ազդու մէկ տեսարան մը չէի տեսած . տուն դարձած ատենս , ան բոլորովին իմ միտքս լեցուց :

Միտքէս ըսի որ , մնաս բարով սիրելի բարեկամս , մինչև ան յաւիտենականութեան օրվանը

առտուն, երբոր մեր անձնական հաղորդակցութիւնը կրկին պիտի նորոգվի :

Վուն մէկ կիսայրեաց փատ մըն էիր կրակին մէջէն ելած, որ երկինքի փառաւորութեանը մէջ փայլուն աստղ մը ըլլաս : Աս քու լոյսդ ու բարի գործքերդ տեսայ, անոր համար մեր երկինքի հայրը պիտի փառաւորեմ : Աս քու օրինակիդ մէջը մեղաւորի մը ազատաբար՝ շնորհքով փրկըվելուն ինչ բան ըլլալը տեսայ : Իբր մէկ կենդանի հայելի մը մէջ ես քենէ սորվեցայ՝ թէ ով է ան մարդը որ հաւատքին ու սիրոյ գործքը կը սկսէ, կը շարունակէ, ու կը վերջացունէ : Յիսուս ամէնը՝ ու ամէնուն մէջն է, ան պիտի փառաւորվի : Ինքը յաղթութեամբ ան պսակը ստացաւ, ու անոր միայն արժան է անիկա հագնիլ :

Թող չի ջանայ մէկը անիկա իր փառքէն մերկացունելու. ինքը փրկութիւն կուտայ, ու մինչև յետինը ինքը կը փրկէ : Մնաս բարով սիրելի քոյրս Տէրոջմով : Քու մարմինդ ու սիրտդ կրնան մարիլ, բայց քու սրտիդ դժըր Աստուած է, ու յաւիտեան քու բաժինդ ան պիտի ըլլայ :

Քիչ ժամանակէ ետեւ իմ բարեկամիս մեռելին կանչըվեցայ որ իմ զատվելէս շատ չանցած մեռեր է : Ետ զուարճալի՝ սակայն վշտալի խորհուրդներ աս պաշտօնին կատարմանը հետ միացեալ էր : Աս անոր հետ ըրած ան անթիւ ու պիտանի խօսակցութիւնները միտքս կը բերէի, որոնք երկրիս վրայ ալ չէր կրնար ըլլըվէր : Աս անոր քրիստոնէական բարեկամութեանը՝ օգտակար ու ընտիր բնութեանը վրայօք կը մտմտայի թէ և պալատներու մէջ եղած ըլլար կամ թէ խրճիթներու մէջ, շատ շնորհակալ կը ըլլայի ան աղջկանը հետ վայելած պատեհութեանս համար : Աս մէկ քանի բոպէ

կայնած կըմտմտայի թէ ան քրիստոնէութեան մեծ ճշմարտութիւնները ալ մէկու մը բերնէ կարող չի պիտի կրնամ ըլլալ լսելու, որն որ ան կենաց ջուրերէն այնչափ խմած ըլլար: Սակայն ան իմ ելած սիրտս յորդորական խորհուրդներով կըզազարէր, երբոր միտքս կըբերէի թէ «Մն յաւիտենական փրկութեան մէջը գնաց»: Արնայի մի ուզեր արդեօք անիկա կրկին աս արտասուաց ձորին մէջը բերելու:

Արբոր խրճիթը մտայ տեսայ որ դրացիներէն շատ քրիստոնեայ բարեկամներ մէկ տեղ ժողվելքեր էին իրենց վերջին պատուոյ ու յարգութեան հարկը ցուցնելու, ան խաշնարածին աղջկանը յիշատակութեանը համար:

Խնդրեցին որ ես ան մեռելին սենեակը երթամ, ուրտեղ իր աղգականները ու մէկ քանի ուրիշ բարեկամներ գացեր էին Աղիսաբէթին մեռած մարմինին վրայ մէյմալ նայելու:

Թէ որ անանկ մէկ ժամանակ մը ուզենք երբոր Վրիստոս՝ ու փրկութիւնը, մահը՝ ու դատաստանը, երկինքը՝ ու դժողքը մեզի առաւել յայտնի երևայ, ահա աս է ան ժամանակը երբոր մէկ հաւատացեալ մեզածի մը քովը կուգանք, ու անոր մարմինը պառկած կըտեսնանք:

Աղիսաբէթին դէմքը փոխված էր, սակայն իր նմանութեանը շատը դրած էր: Եր հայրը ու մայրը գլխուն կողմը նստեր էին, ու իր եղբայրն ալ ոտքին տակը, իրենց խորին ու անկեղծ տրտմութիւնը յայտնելով: Մն երկու ծնողքները ծեր հասակի մէջ ըլլալնուն համար իրենց տկարութիւնը ու անհաստատութիւնը առաւել իրենց վիշտը շատցուց, ու շատերը կըտրտմէին ու կըմեղկընային զանոնք:

Սէկ շատ պարկեշտ դէմքով կնիկ մը որ մէկ քանի փոքր թէպէտ հարկաւոր պաշտօններով ղբաղեալ էր ան տանը մէջը, ինծի եկաւ ու ըսաւ :

Տէր իմ, Մսիկա զուարճութեան մէկ տեսարան մըն է, քան թէ տրամութեան : Անտարակոյս ես կը հաւատամ որ մեր սիրելի բարեկամը Աղիսաբէթ ասանկ կը համարի : Ինքը բոլոր տրամութիւններէն հիմայ ազատած է : Գուք ալ ասանկ չէք մի կարծեր տէր իմ :

Գիտցածներուս, տեսածներուս ու ըսածներուս նայելով, պատասխան տրվի իրեն, բոլորովին վստահ եմ թէ քանի որ անոր մտքմինը հոս կը կենայ իր հոգին արքայութեան մէջը իր Փրկիչին քովն է : Ինքը երբոր աշխարհքին մէջն էր անիկա կը սիրէր, ու հիմայ ալ յաւիտեան անոր աջ կողմը եղած զուարճութիւնները կը վայելէ կոր :

“Ողորմութիւն ու գթութիւն ըլլայ ինծի պէս մէկ ողորմելի ծեր արարածի մը՝ որ տարիքով ու ցաւով տկարացած եմ. ես ինչ պիտի ընեմ ըսաւ մայրը : Աղիսաբէթը՝ իմ աղջիկս մեռաւ գնաց : Ո՛հ իմ զաւակս, մէյմալ քեզ չի պիտի տեսնամ : Ինքը հառաչելով մը ըսաւ, Ո՛վ Աստուած ողորմէ ինծի պէս մեղաւորի մը” :

Ան ատենը ես իրեն ըսի, սիրելի ու աղնիւ կնիկ, ատ վերջին աղօթքը ձեզ կրկին մէկզմէկու քով պիտի բերէ : Մսիկա անանկ մէկ աղաղակ մըն է որ հազարաւոր հոգիներ փառաւորութեան բերած է : Ան ձեր աղջիկը հոն տարաւ ու կը յուսամ թէ ձեզ ալ անոր պէս հոն պիտի տանի : Ան ամենեւին “իրեն գացողները չի պիտի վռնաէ” :

Իմ սիրելիս, ըսաւ խաշնարածը, իր երկար ժամանակ պահած լուութիւնը խանգարելով, եկէք մենք մեր զաւկովը Տէրոջը ապաւինինք, ու մենք

մեղ իրեն յանձնենք: Տէրը տրվաւ ու Տէրը առաւ, օրհնեալ ըլլայ Տէրոջը անունը: Սենք ծեր ենք ու շատ քիչ ժամանակ կայ մեր ճամբորդութիւնը լըմընցունելու, սակայն ասկէ ետեւ ալ չի կրնաց խօսեր էր:

Ան առջի յիշված զինուորը մէկ Մատուածաշունչ մը տրվաւ ձեռքս ու ըսաւ, տէր իմ, գուցէ եկեղեցի երթալէն առաջ գլուխ մը բան կարդալու չի պիտի ձանձրանայք:

Աս ալ ըսածին պէս կարդացի, որնոր Հորին տասնըչորսերորդ գլուխն էր: Կարդացած ժամանակս մէկ անուշ հանդարտութիւն մը տիրեր էր: Ան մեռելին սենեակին մէջի ամէն մէկ անցնող վայրկեանը շատ յարգի կերեար: Մէկ քանի ծանօթութիւններ ըրի ան կարդացած գլխուս վրայօք, ու վերջը անոնք մեր մեռած քրոջը վիճակին հետ բերի կապեցի:

Հիմայ ան մեր պատերազմական ընկերը ըսաւ, ես մէկ աղքատ զինուոր մըն եմ, ու աս աշխարհքիս ստացուածքներէն մէկ բան մը չունիմ բացի իմ օրական կերակուրէս, սակայն բոլոր աս աշխարհքիս մէջի եղածներուն չեմ փոխեր ան իմ փրկութեանս յոյսը՝ որուն պտուղը հանդերձեալ աշխարհքին մէջը պիտի վայելեմ: Անչ է առանց շնորհքի եղած հարստութիւնը: (Օրհնեալ ըլլայ Մատուած որ երբոր մէկ սահմանէն միւս սահմանը կանցնիմ, գացած տեղս Տէրը կրգտնամ, ու շունորհակալութիւն ըլլայ իր սուրբ անունին որ ինքը պսօր աս տանը մէջի մեռածին ու ողջին ընկերութեանը մէջ տեղն է, ու գիտեմ որ իր հոս ըլլալը շատ աղէկ է:

Ան տեղը գտնելով ուրիշ մէկ քանի մարդիկ ալ սկսեցին խօսիլ, որ նոյն ժամանակը ան խաշնա-

բածին աղջկանը վարքը ու գիտութիւնը շատ օգտակար կերպով մը առաջ բերվեցաւ . ամէն մէկ բարեկամ մէյմէկ քիչ բան ունէին պատմելու անոր ազնիւ բնութեանը վրայօք : Այն հետըմանց ազգական մը՝ քսան տարեկան երիտասարդ աղջիկ մը որ մինչև հիմայ շատ սնոտի ու անպիտան բնութեան մը տէր էր, կերևար թէ ան օրվան եղած խօսակցութիւնը յայտնի անոր մտքին մէջը տպաւորվեցաւ : Աւես ան ժամանակէն՝ ի վեր կը հաւատամ որ ան Աստուածային շնորհքը սկսեց անոր ներգործել, ու ան առաւել աղէկ բաժինը ընտրել տրվաւ, որն որ ամենեւին իրմէն հտ չի պիտի առնըվի :

Իսկ թէ որ ան տեսակ մարդիկը ասոնց հետ բաղդատվելու ըլլովի որոնք անմիտ, անզգայ, չարօրինակ ու գինեմոլ են, ու շատ ժամանակ ալ մեռելին տանը մէջ անվայել կերպով կը վարվին, արդեօք որչափ տարբեր պիտի ըլլայ ասոնց տեսարանը միւսներէն :

Հիմայ եկեղեցի երթալու ժամանակը եկաւ : Այս մէյմալ գացի ան մեռելին երեսը տեսնալու : Շատ բան գրված էր անոր դէմքին վրայ . յայտնի ինքը մէկ խնդումով մը մեռեր էր : Այն խնդումը տակաւին մնացեր էր ու անոր հոգին հանդարտութիւնը կը յայտնէր : Ան տեղի եղած սովորութեանը պէս ինքը ճաղին մէջը ծաղիկներու տերեւներով զարդարեր էին : Թէպէտ ասոնք թողմելու ծաղիկներ էին, սակայն ան դրախտը միտքս բերել տրվին՝ որուն ծաղիկները անմահական են, և ուրտեղ իր անմահ հոգին կը հանգչի :

Ան երջանիկ խորհուրդը իս մէկէն՝ ի մէկ զարհուրեցուց երբոր անոր ըրած վերջին խօսքերը

միտքս բերի որ ըսեր էր , թէ “Սահը իրացընէ
յաղթութեամբ կը լլըվեցաւ” :

Օչատված ժամանակս կամացուկ մը ներսըդի-
էս ըսի . “Վասիրելի քոյրս՝ խաղաղութիւն ըլլայ
քու յիշատակութիւնդ իմ հոգիիս , մինչև որ
մէկզմէկ առաւել ընտիր աշխարհքի մը մէջ գրա-
նալու ըլլանք :

Վիչ ժամանակի մէջ ան թաղման հանդէսը
պատրաստըվեցաւ , ու ան մեռելին հետը եկող
մարդոցը շատերը բարի ու հոգեւոր մարդիկ ըլլալ-
նուն համար առաւել դիտելու արժան օգտակար
մէկ տեսարան մը եղաւ :

Ղամբուն մէկ մասը երթալէն ետե՛ իմ մտա-
ծութիւնս մէկէն՝ ի մէկ զուարճալի կերպով մը ան
մեռելին հետը եկող բարեկամները խանգարե-
ցին , մէկ թաղման սաղմոս մը երգելու սկսելով .
Արիշ ասանկ մէկ անուշ կամ երևելի բան մը չէր
կրնար ըլլալ : Օղին բացութիւնը՝ երաժշտու-
թեան ձայները քաղցրացունել կուտար : Մն շատ
գեղեցիկ մէկ ճամբայ մըն էր որուն մէջէն մենք
կանցնէինք : Մն մէկ բլուրի մը տակ էր որ երբեմն
երգեցողներուն ձայնին արձագանք տալով կրկին
հնչեցունել կուտային , ու կերևար թէ ան սրգա-
ւորներուն ձայնին կամացուկ պատասխաններ
կուտային :

Ա երջապէս եկեղեցի հասանք : Մն տեղի եղած
ժամերգութիւնը յօժարամիտ ու սրտեռանդ մը-
տաղրութեամբ ամէն մարդ մտիկ ըրաւ : Արբոր
գերեզմանը եկանք Աղիսարէթին ընտրած երգը
երգեցինք : Մենք մեր սիրելի բարեկամին մարմինը
ասանկ զօրաւոր՝ կրկին յարութիւն առնելու յոյ-
սով մը գերեզմանին յանձնեցինք :

Մն կերպով բաժանման վարագոյրը քիչ մը

Ժամանակի համար քաշվեցաւ : Ինքը զատվեցաւ
 ու մէյմալ չի տեսնելվեցաւ . սակայն վերջին օրը
 իր Վրկիչին աջ կողմը պիտի տեսնելի ու իր փառ-
 քին համար պիտի յայտնելի , իբր իր շնորհացը
 մէկ հրաշքը ու իր ողորմութեանը մէկ յիշատակը
 ըլլալու :

Իմ սիրելի կարգացողս՝ աղքատ կամ հարուստ ,
 արդեօք դուն ալ ու ես ալ հոն պիտի տեսնելի՞նք
 մի : Արդեօք “Կոնարհութեամբ հա՞րգված” ենք
 մի , ու մէկ փրկիչի մը արդարութեանը հարսնիքին
 լաթերովը զարդարված ենք մի : Արդեօք աշ-
 խարհքը սիրելէն դարձած՝ կենդանի Աստուծոյն
 կրճառայենքկոր մի : Արդեօք մենք մեր ունայնու-
 թիւնը գիտե՞նք կոր մի , ու Վրկիչին լիութեանը
 կրվազե՞նքկոր մի իրմէն շնորհք ու զօրութիւն
 սունելու համար :

Հիմայ իմ աղքատ կարգացողս , ան խաշնա-
 րածին աղջիկը աղքատ մէկ աղջիկ մըն էր , ու մէկ
 աղքատ մարդու մըն ալ զաւակ էր : Ան կողմանէ
 դուն անոր կրնմանիս , սակայն արդեօք ինքը ինչ-
 պէս Վրիստոսի կրնմանէրնէ , դուն ալ իրեն ա-
 նանկ կրնմանի՞ս մի : Արդեօք դուն հաւատքով
 հարստացա՞ծ ես մի : Արդեօք քեզի համար պահ-
 ված պսակ մը ունի՞ս մի , քու սիրտդ ան երկնաւոր
 հարստութեանը վրայ դրա՞ծ ես մի : Թէ որ չես
 նէ , աս պատմութիւնը անգամ մընալ կարգա՛ , ու
 անանկ մէկ աղնիւ հաւատք մը ունենալու համար
 ջերմեռանդ սրտիւ աղօթք ըրէ : Թէ որ շնորհքին
 միջնորդութեամբը , ան խաշնարածին աղջիկը
 փրկող Վրկիչը սիրելու ըլլաս ու անոր ծառայես ,
 շնորհքը՝ խաղաղութիւնը ու գթութիւնը քեզի
 հետ ըլլայ : Ան աղջկանը հետ քիչ ժամանակէն
 ան ժառանգութեանը մէջը պիտի մտնաս , որ ա-
 նապական ու անարատ է , ու ամենեւին չի թողար :

ՆՕՒՆՈՒՆ-ԼԻՆ :

Այրը իր աղջկանը մեռնելէն վեց ամիսի չափ ետև մեռաւ . ու ես աղէկ պատճառ ունիմ հաւատարու որ Մստուած անոր գթութիւն ըրաւ , ու անիկա իրեն առաւ :

Արանի թէ ամէն մեղքէ դարձող զաւակնալ իր անզեղջ ծնողացը փրկութեանը համար աշխատի ու աղօթք ընէ : Այրը անոր վրայ քիչ մը ժամանակ է վել ապրեցաւ , ու իր ծեր հասակը աւետարանին յարմար վարքով մը ու կենակցութիւնով մը զարգարեց : Մտարակոյս ան աղջիկը ու իր ծնողքները հիմայ մէկզմէկ գտած են “Մն մաքուր զուարճութեանց երկրին մէջը՝ ուրտեղ անմահ սուրբերը կրթագաւորեն” :

Ա Ն Ր Գ :





